ԱՐԱՐԱՏ

Պաշտօնաթերթ ՌԱՄԿԱՎԱՐ ԱՋԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅՈՒՆԻՍ 21, 2026

Ժ. Տարի, թիւ 25 (480) (Նոր Շրջան), Հիմնուած 1899-ին, իբրեւ «Ձայն Հայրենեաց»

ԱՅՍ ԹԻՒՈՎ ԿԱՐԴԱԼ՝

ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ էջ 2
ԱՐԴԵՈ՞Ք ԱՄՆ-ԻՐԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՍՏԱՒՈՐ ԵՆ... էջ 3
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ... էջ 4
ԻՐԱՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ... էջ 5
ԹՄՄ «ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ էջ 6
ԴԱՐԻ ՊՈՒՏԻ ԱՆՄԱՀԱԿԱՆԸ էջ 7
Քնական Նախաբան Արեւմտեան Հայաշխարհի Հազարամեայ Պատմութեան... էջ 8
ՊԷՅՐՈՒԹԻ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆ էջ 9
ԻՆՉՊԷՍ ԼՈՒՍԱԿԱԹ ԱՐԵԳԱԿԱՆ ՇՈՂ էջ 11

ԿԻՆԵՐՈՒ ՁՕՐԱՇԱՐԺԸ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՋ ՊԱՀՈՒՈՂ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐՈՒՆ

2023-ի սեպտեմբերեան ցեղային զտումէն ի վեր, 19 հայեր, որոնց շարքին՝ Արցախի Հանրապետութեան 8 նախկին ղեկավարներ, կը մնան բանտարկուած Պաքուի մէջ՝ ամբողջովին զրկուած տեսակցութեան իրաւունքէ: Անոնք աւելի քան երեք տարիէ ի վեր չեն տեսած իրենց հարազատները:

Այս ծանր կացութեան դիմաց, գործարար, հայ բարերար եւ Արցախի նախկին Պետական նախարար Ռուբէն Վարդանեանի կինը՝ Վերոնիքա Զոնապենտ կը նախաձեռնէ մարդասիրական յատուկ արշաւի մը:

Նախաձեռնութեան նպատակն է կազմել բացառապէս կիներէ բաղկացած միջազգային մարդասիրական պատուիրակութիւն մը, որ պիտի մեկնի Պաքու՝ իր զօրակցութիւնը յայտնելու հայ բանտարկեալներուն եւ անոնց յանձնելու աջակցութեան նամակներ, լուսանկարներ ու հարազատներու պատգամներ:

«Արցախի աջակցութեան ընկերակցութիւն»-ը լիովին կը զօրակցի այս քայլին եւ կոչ կ'ուղղէ ֆրանսացի բոլոր կին քաղաքական գործիչներուն, ընտրեալներուն, միութենական ղեկավարներուն, մտաւորականներուն, արուեստագէտներուն, ինչպէս նաեւ Հայաստանի ու Արցախի բարեկամ բոլոր կիներուն՝ իրենց աջակցութիւնը յայտնելու այս մարդասիրական նախաձեռնութեան:

Կրնաք ձեր մասնակցութիւնը բերել՝ որեւէ լեզուով աջակցութեան նամակ մը յղելով հետեւեալ ելեկտրոնային հասցէին. letters@freearmenian-prisoners.com: Կ'ապաւինինք ձեզի՝ այս նախաձեռնութիւնը ձեր շրջապատին մէջ տարածելու համար:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ԱՖՐԱՄ Բ. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Հինգշաբթի, 18 Յունիս 2026-ին, Պիքֆայայի Սուրբ Աստուածածին Վանքին մէջ, երկար հանդիպում կայացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Ն.Ս. Աֆրամ Բ. Պատրիարքին միջեւ: Հանդիպման ընթացքին Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին Գերշ. Տ. Տաճատ Եպս. Աշըգեան, Գերպ. Տ. Պարոյր Ծ. Վրդ. Շէրնէզեան եւ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան. իսկ Պատրիարքին կողքին՝ Պուլոս Արք. Սաֆար, Տանիէլ Արք. Քուրիէ եւ Ժոզէֆ Եպս. Պալի:

Խօսակցութեան ընթացքին արծարծուեցան Վեհափառ Հայրապետին Վատիկան կատարած պաշտօնական այցելութիւնը, արեւելեան ուղղափառ եկեղեցիներու ու կաթոլիկ եկեղեցւոյ միջեւ աստուածաբանական երկխօսութիւնը, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի եկեղեցիներուն դիմագրաւող հարցեր:

Յատուկ կերպով անդրադարձ կատարուեցաւ Մալապարի ասորի ուղղափառ եկեղեցւոյ յարաբերութեանց առնչուած հարցերուն:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՆՈՐ ԽՍՏԱՇՈՒՆՉ ՁԳՈՒՇԱՅՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻՆ

«ԴԷՊԻ ԱՐԵՄՈՒՏՔ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ՅՂԻ Է ՆԵՐՔԻՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ»

Եթէ Հայաստանի ղեկավարութիւնը կողմնորոշուի բացառապէս դէպի Արեւմուտք եւ ապաւինի անոր աջակցութեան՝ սխալ գործած կ'ըլլայ: Այս մասին ռուսական պետական ԹԱՍՍ գործակալութեան տուած իր հարցազրոյցին մէջ յայտարարած է Ռուսաստանի Արտաքին հետախուզութեան ծառայութեան տնօրէն Սերկէյ Նարիշքինը:

Վերջինիս համոզումով՝ նման քայլի պարագային երկրին ներքին կացութիւնը պիտի բարդանայ, ինչպէս նաեւ տնտեսական զարգացման դէմ լրացուցիչ խոչընդոտներ ու դժուարութիւններ պիտի ստեղծուին:

Թէ յատկապէս ինչո՞ւ եւ ինչպէ՞ս պիտի բարդանայ Հայաստանի ներքին իրավիճակը, ռուս պաշտօնատարը չէ մանրամասնած, այլ գոհացած է ըսելով. "Կը յուսամ, որ Հայաստանի ղեկավարութիւնը խոհեմութեամբ կը գործէ": Միաժամանակ, Նարիշքին շեշտած է, որ Ռուսաստանի համար կարեւոր է Հայաստանի հետ բարեկամական յարաբերութիւններու պահպանումը:

Թէեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարած էր, թէ Երեւան մտադիր չէ դուրս գալ Եւրասիական տնտեսական միութենէն (ԵԱՏՄ), սակայն ռուս պաշտօնատարները կը շարունակեն պնդել, որ Հայաստանի մերձեցումը Եւրոպական Միութեան հետ կ'ենթադրէ ԵԱՏՄ-ի հետ գործակցութեան դադրեցում:



ԱԼԻԵԻ ՊԱՇՏՕՆԱՊԷՍ ԱՏՐՊԷՅՃԱՆ ՀՐԱՒԻՐԱԾ Է ՀՌՈՄԻ ՊԱՊԸ

Իլհամ Ալիեւ Կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետ Լեւոն ԺԴ. պապին Ատրպէյճան այցելելու պաշտօնական հրաւէր յղած է: Այս մասին կը հաղորդէ Ատրպէյճանի նախագահին կայքէջը:

«Սուրբ Աթոռի միջկրօնական երկխօսութեան բաժանմունքի պատասխանատու Ճորճ Ճէյքըպ Քուվաքատայի հետ Պաքուի մէջ կայացած հանդիպումին ընթացքին, Ալիեւ անոր յանձնած է Հռոմի Պապին ուղղուած՝ Ատրպէյճան այցելելու հրաւէրի նամակը»,– կը նշուի այս մասին հրապարակուած հաղորդագրութեան մէջ:

Ալիեւ եւ Վատիկանի պատուիրակութիւնը 16 Յունիսին կայացած հանդիպումին ընթացքին քննարկած են նաեւ Ատրպէյճանի տարածքին երկրորդ կաթողիկէ եկեղեցիի մը կառուցման, ինչպէս նաեւ «Հայտար Ալիեւ» հիմնադրամին եւ Սուրբ Աթոռին միջեւ հետագայ համագործակցութեան վերաբերող հարցեր:

ՊՈԼԻՍ

ԳԱԼՖԱՅԵԱՆ ՏԱՆ 19-ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔԸ

Աթագիւղի ողիմպիական աւանին մէջ նախընթաց օր տեղի ունեցաւ՝ Գալֆայեան տան նախաձեռնութեամբ կազմակերպուած 19-րդ մարզական խրախճանքը, որ բացառիկ խանդավառութեան առիթ դարձաւ:

Միջվարժարանային այս ձեռնարկը ձօնուած էր՝ հոգելոյս Վարսէն Օրունճաքճըէլի յիշատակին: Ծրագրի բարերարուհին էր Մարգրիտ Աթմաճա, որ տարիներէ ի վեր այս ուղղութեամբ հետեւողականութիւն կը ցուցաբերէ՝ իր լուսահոգի մօր յիշատակը անմահացնելու համար: Այս տարուան խրախճանքը զուգադիպեցաւ՝ Գալֆայեան տան հիմնադրութեան 160-ամեակի յոբելենական շրջանին: Համայնքային վարժարաններէն շուրջ 500 աշակերտ մասնակցեցաւ ծրագրին, որու ընթացքին եղբայրական մթնոլորտի մէջ մրցակցութեան բարձր տրամադրութիւն ստեղծուեցաւ:

Խրախճանքին հետեւեցան Գալֆայեան տան խնամակալութեան ատենապետուհի Թամար Մայօղլու եւ գործակից ընկերները, վարժարանի տնօրէնուհի Թամար Ներկիզ, բազմաթիւ կրթական մշակներ եւ հիւրեր: Ի յիշատակ 19-րդ խրախճանքին՝ Մարգրիտ Աթմաճային յանձնուեցաւ յուշանուէր մը:

ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳԴ, փրոֆէսոր

Ինչպէս խոստացել էինք, կը փորձենք համառօտ ներկայացնել Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքներն ու յետընտրական գործընթացները: Եւ այսպէս, Հայաստանի Ազգային ժողովի 9-րդ գումարման ընտրութիւններում, որը կայացել է 2026 թուականի յունիսի 7-ին, գլխաւոր մրցակից ուժերն էին իշխող քաղաքացիական պայմանագիր կուսակցութիւնը, ուժեղ Հայաստան եւ Հայաստան դաշինքները: Ըստ կեղրոնական ընտրական յանձնաժողովի հրապարակած պաշտօնական տուեալների՝ ընտրութիւններին քուէարկելու իրաւունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիւը 2,507,216 էր, ընտրութիւններին մասնակցեց 1,477,736 քաղաքացի: Ընտրութիւնների արդիւնքներով իշխող ուժը պահպանեց մեծամասնութիւնը խորհրդարանում՝ չնայած այն հանգամանքին, որ ստացել է քուէների 49,85%: Այսպէս, Քաղաքացիական պայմանագիրը ստացել է 727,827 ձայն կամ 49,85 տոկոս եւ կ'ունենայ 62 պատգամաւոր, Ուժեղ Հայաստանը համապատասխանաբար՝ 340,088, 23,28, 29, Հայաստան դաշինքը՝ 145,113, 9,93, 11: Բարգաւաճ Հայաստանը՝ 58,378, 3,99՝ ոչ մի մանդատ չի ստանայ:



Անցել է մի քանի օր, սակայն կրքերը չեն հանդարտւում: Աւելին, հնչում են տարաբնոյթ բողոքներ եւ օդը մի տեսակ յագեցած է անբաւարարուածութեան տենդով: Այնպէս որ, յետընտրական գործընթացները բաւականին բուռն են, իսկ գլխաւորը՝ ընդդիմութեան կողմից մանդատները վերցնել-չվերցնելու խնդիրը: Ստիպուած եմ ընդգծել, որ գրեթէ բոլորն անխտիր քաղաքագիտական վերլուծութիւններ են կատարում եւ ինքնակոչ անսխալականութեան դիրքերից կարծիքներ յայտնում: Կարդալով ընտրութիւնների արդիւնքների մասին այդ քաղաքագիտական ճռճռան վերլուծականները, որոշեցի մի դիտարկում էլ ինքս հրապարակել: Պէտք չի այդքան «բարդ» քաղաքագիտական յայտնագործութիւններ անել: Բարդ ոչինչ էլ չկայ: Ամէն ինչ շատ պարզ է, որովհետեւ մարդը սոցիալական էակ է, նրա կեցութիւնն է որոշում իր գիտակցութիւնն ու քաղաքական վարքը: Ներկայ փուլում, առանց չափազանցութեան, մեր պետութեան ապագան որոշւում է Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովում: Գիտակցու՞մ են արդեօք ԿԸՀ-ի անդամներն իրենց այդ պատասխանատուութիւնը: Կասկածելի է եւ դրա համար բոլոր հիմքերը կան:

Հայաստանեան հասարակութեան մօտ 40 տոկոսը աղքատ է կամ ծայրայեղ աղքատ: Միջին խաւը, որը որպէս կանոն առաւել գիտակից եւ հայրենասէր հատուածն է, բաւականին փոքր տեսակարար կշիռ ունի: Հայրենասիրական պաթոսով քարոզարշաւը այսպիսի հանգամանքներում կորցնում է իր արդիւնաւէտութիւնը: Ինչպէս ասում էր բոլոր ժամանակների քաղաքական մտքի ռահվիրան՝ Մարքսը, պրոլետարները ոչինչ չունեն կորցնելու բացի իրենց շղթաներից եւ յաւելում նաեւ, որ ոչ հարուստներն ունեն հայրենիք, ոչ էլ աղքատները: Հարուստները ուր էլ գնան հայրենիք կը գտնեն, իսկ աղքատները ատում են իրենց այս վիճակին հասցրած հայրենիքը: Նրանք շատ վատ են ընկալում նաեւ հարուստ քաղաքական-պետական գործիչներին: Այսինքն սովորաբար յաղթում է նա, ով ճիշդ է վարում իր նախընտրական տեխնոլոգիաները եւ առաւել արդիւնաւէտ է կարողանում մերձենալ եւ համակրելի դառնալ հասարակութեան աւելի մեծ հատուածին: Բոլոր ժամանակների բացարձակ ճշմարտութիւնն է: Դեռեւս Հին Հռոմում յաղթում էր այն զօրավարը, ով կարողանում էր «հաց եւ տեսարաններ» ապահովել:

Ինքս երբեւէ չեմ համարել, որ միակ ճիշդ կարծիքն եմ յայտնում: Բայց ուզում եմ, որ քաղաքականութիւնը իսկապէս դառնայ բաց խօսակցութիւն վարելու տեղ: Կարծում եմ, որ իրաւունք ունեմ այս հարցերը տալու ընդդիմութեանը: Կարծում եմ՝ այդ իրաւունքը որեւէ մէկը չի կարող վիճարկել: Բնական է, որ հարցերի առաջին հասցէատէրը «Ուժեղ Հայաստան» դաշինքն է, քանզի իրենց կողմից ձեւաւորուել են յաղթանակի ամենաբարձր սպասումները՝ գրեթէ չքննարկելով որեւէ այլ սցենար: Ընտրողների հետ չի եղել բաց խօսակցութիւն այն մասին, թէ ինչ է լինելու պարտութեան դէպքում, ինչ քայլեր են նախատեսւում տարբեր զարգացումների պարագայում, եւ ինչ քաղաքական որոշումներ կարող են կայացուել այս կամ այն հանգամանքներում: Իսկ այն քաղաքական ուժը, որը չունի յստակ յետընտրական սցենարներ՝

– իրաւական դիմադրութեան,
– ինստիտուցիոնալ ճնշման,
– քաղաքացիական վերահսկման,
– հանրային մոբիլիզացիայի,
– միջազգային քաղաքական աշխատանքի մակարդակներում,

իրականում չի յաւակնում իշխանութեան զսպմանը, այլ ընդամէնը մասնակցում է ձեւական ընտրական արարողութեանը կամ աւելի վատ, ոչ թէ միտուած է բեկման այլ միտուած է համակարգում տեղ գտնելուն:

«Հայաստան» դաշինքը հակառակ բազմաթիւ կանխատեսումների, քաղաքական մեկնաբանութիւնների, հաշուարկների եւ սպասումների, արեց առաւելագոյնը՝ համախմբելու հէնց իր ընտրողին: Նրանց քաղաքական արշաւի առանցքը սեփական ընտրազանգուածի մոբիլիզացումն էր, եւ այդ խնդիրը նրանք լուծեցին հնարաւորինս ամբողջական ձեւով: Անկախ ամէնից, կարծում եմ, որ բոլոր ընտրողները, արժանի են ստանալու մի շարք կարեւոր հարցերի պատասխաններ: Ընդ որում, ես պատրաստ եմ յարգել ցանկացած քաղաքական որոշում, եթէ այն հիմնաւորուած է, տրամաբանական է եւ ազնուօրէն ներկայացուած է ընտրողին: Հետեւաբար կ'ուզենայի լսել այս հարցերի յստակ պատասխանները.

1. Եթէ պնդում էք, որ ընտրութիւնների արդիւնքները կեղծուել են, պատրաստու՞մ էք այդ արդիւնքները վիճարկել Սահմանադրական դատարանում: Եթէ այո, ապա ի՞նչ ծաւալի եւ ի՞նչ բնոյթի խախտումների մասին է խօսքը: Խօսքը առանձին տեղամասերում արձանագրուած խախտումնե՞ր մասին է, թէ՞ այնպիսի խախտումների, որոնք, ձեր գնահատմամբ, ազդել են ընտրութիւնների վերջնարդիւնքի վրայ:

2. Եթէ պատրաստւում էք դիմել Սահմանադրական դատարան, ապա արդեօ՞ք վստահում էք այդ դատարանին: Յիշեցնեմ, որ տարիներ շարունակ ընդդիմութիւնն ինքն է պնդել, որ գործող իշխանութիւնների օրօք Սահմանադրական դատարանը ձեւաւորուել է քաղաքական միջամտութիւնների եւ վիճահարոյց գործընթացների արդիւնքում: Հետեւաբար հարցը պարզ է. վստահու՞մ էք այդ դատարանին, թէ՞ ոչ:

3. Եթէ վստահում էք Սահմանադրական դատարանին այնքան, որ ձեր քաղաքական պայքարի առանցքային փուլը տեղափոխում էք այնտեղ, ապա պատրա՞ստ էք ընդունել նաեւ այդ դատարանի որոշումը: Մասնաւորապէս՝ եթէ Սահմանադրական դատարանը որոշի, որ ընտրութիւնների արդիւնքները պէտք է մնան ուժի մէջ եւ բաւարար հիմքեր չկան դրանք անվաւեր ճանաչելու համար, ընդունելու՞ էք այդ որոշումը: Թէ՞ Սահմանադրական դատարանի որոշումը ձեզ համար ընդունելի է միայն այն դէպքում, երբ համապատասխանում է ձեր ակնկալիքներին:

4. Եթէ Սահմանադրական դատարանը չի բաւարարում ձեր պահանջները եւ ընտրութիւնների արդիւնքները մնում են ուժի մէջ, այդ դէպքում ի՞նչ է անելու ընդդիմութիւնը: Գնալու՞ էք խորհրդարան:

5. Եթէ որոշում էք գնալ խորհրդարան, ապա ինչու՞: Որ՞ն է այն քաղաքական նպատակը, որը հնարաւոր է իրագործել խորհրդարանում եւ հնարաւոր չէ իրագործել խորհրդարանից դուրս:

6. Եթէ որոշում էք չգնալ խորհրդարան, ապա ինչու՞: Որ՞ն է հետագայ գործողութիւնների ծրագիրը: Ի՞նչ քաղաքական արդիւնք էք ակնկալում ստանալ այդ որոշումից:

7. Եթէ խորհրդարանն է պայքարի հարթակը, ապա կոնկրէտ ի՞նչ գործիքակազմ էք պատրաստւում օգտագործել: Որո՞նք են այն մեխանիզմները, որոնք, ձեր կարծիքով, կարող են իրական քաղաքական արդիւնք ապահովել:

8. Ո՞րն էք համարում վերջին հինգ տարիների ընդդիմադիր խորհրդարանական գործունէութեան ամենաարդիւնաւէտ արդիւնքը: Ո՞րն է այն կոնկրէտ քաղաքական, օրէնսդրական կամ հանրային ազդեցութիւնը, որը ցոյց է տալիս, որ խորհրդարանական մանդատը կարող է լինել արդիւնաւէտ քաղաքական գործիք: Յաճախ ակնարկներ են արւում, որ «սա գնալու է մինչեւ տարեվերջ» կամ էլի եսիմ երբ, որ գործող իշխանութիւնը երկար չի պահպանելու իշխանութիւնը, որ քաղաքական իրավիճակը կարող է կտրուկ փոխուել մէկ կամ երկու տարուայ ընթացքում: Արդեօ՞ք մանդատները պահելու եւ խորհրդարանում մնալու տրամաբանութեան մէջ կայ նաեւ նման հաշուարկ: Եթէ կայ՝ ասէք: Եթէ չկայ, ապա ինչու՞ այդ ակնարկները շարունակաբար շրջանառւում են քաղաքական դաշտում:

10. Վստա՞հ էք ձեր ցուցակների քաղաքական յուսալիութեան ու միատարրութեան վրայ: Ազնիւ ասեմ՝ ես վստահ չեմ, գիտեմ խնդիր կայ: Բայց սա էլ ասէք: Թող խօսեն նրանք, ովքեր ուզում են մանդատ վերցնել:

Սրանք մեղադրանքներ չեն: Սրանք հարցեր են, որոնց պատասխանները, պարտաւոր էք տալ: Ոչ թէ կարգախօսների, ոչ թէ յոյզերի, ոչ թէ հերթական «շուտով ամէն ինչ փոխուելու է» ձեւակերպման տեսքով, այլ պարզ, հասկանալի եւ հիմնաւորուած քաղաքական բացատրութեամբ: Դուք ասէք ձեր հիմնաւորումը, ձեր պատկերացումը: Կամ եթէ անգամ դա է ձեր փաստարկը՝ուղիղ ասէք: Որովհետեւ ընտրողը ոչ միայն ձայն է տալիս, այլ նաեւ իրաւունք ունի հասկանալու, թէ ինչ են պատրաստւում անել իր քուէով ստացուած քաղաքական մանդատի հետ:

Առանց չափազանցելու կարծում եմ ընդդիմութիւնը բարդ խնդրի առջեւ է կանգնած: Համարեա շեքսպիրեան «լինել, թէ չլինել»-ու նման: Իրենց դէպքում, ի հարկէ, հարցը հետեւեալն է՝ վերցնել, թէ չվերցնել: Առաջին հայեացքից կասկած անգամ չի առաջանում, որ մանդատները չպէտք է վերցնել: Բայց այդ դէպքում ինչպէս են կարողանալու երեք ուժերը վերահսկել իրենց 200 հոգանոց ցուցակները, որպէսզի իշխանութիւնը չկարողանայ «վերբովկայ» անել այդ ցուցակներում յայտնուած մարդկանց (ի հարկէ այս իրավիճակը չի բացառւում նաեւ վերցնելու պարագայում: Ամենավատն այն է, որ հասարակութեան լայն շրջաններում ձեւաւորւում է կայուն համոզմունք յունիսի 7-ի ընտրութիւնների արդիւնքների համատարած կեղծման ու նենգափոխման վերաբերեալ:

Այս պայմաններում ԱԺ մանդատները վերցնելու եւ խորհրդարան մտնելու նպատակայարմարութեան շուրջ ընդդիմադիր երեք գլխաւոր ուժերի ձգձգւող «խորհրդակցութիւններն» աւելորդ են եւ վնասակար: Հանրութեան հիմնաւոր դիրքորոշումից ու արդարացի տրամադրութիւններից հետ մնալն անթոյլատրելի է, այն էլ՝ այսպիսի վճռորոշ պահերին: Եթէ կան իրական հիմքեր, ապա ժամ առաջ հարկաւոր է պաշտօնապէս յայտարարել ընտրութիւնների արդիւնքները չընդունելու մասին եւ դիմել համապատասխան իրաւական քայլերի: Հրապարակել գործողութիւնների յստակ ծրագիր եւ մօտաւոր ժամանակացոյց: Միայն այդ դէպքում իշխանափոխութեան հնարաւորութիւնն աւելի մօտ կը լինի, քան երբեւէ: Իսկ եթէ ոչ, ապա համակերպուել կատարուածի հետ եւ փորձել որքան հնարաւոր է օրինականութիւնը իրականութեան վերածել մեր երկրում:

14.06.2023, Երեւան

Խմբագրութեան համակարգող՝ Դոկտ. Արշաւիր Կէօնճեան (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝ Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)

Խմբագրական Կազմ

Յակոբ Աւետիքեան (Երեւան)
Պայծիկ Գալայճեան (Պէյրութ)
Ցաւէն Գրիգորեան (Աթէնք)
Վաչէ Սեմերճեան (Լոս Անճելըս)

Հասցէ

Baikar Association Inc.
755 Mt. Auburn Street
Watertown, MA 02472 U.S.A.
Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com
Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722

ԱՐԴԵՕ՞Ք ԱՄՆ-ԻՐԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՆՊԱՍՏԱՒՈՐ ԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

ԱՐԱ ԲԱՐՄԱՔԵԱՆ

Միացեալ Նահանգներ չորեքշաբթի, 17 յունիսին հրապարակեց Իրանի հետ շաբաթավերջին ձեռք բերուած փոխըմբռնման յուշագրի պաշտօնական թեքստը: Այս հանգրուանին ձեւաւորուած Իրանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ արձանագրուած փոխըմբռնումը, նախնական ընթերցմամբ, կը ներկայացնէ տարածաշրջանային զգայուն զարգացում մը, որուն հետեւանքները կրնան ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադառնալ նաեւ Լիբանանի վրայ:

Կարելի է ակնկալել, որ առկայ համաձայնեցումները դեռ կը գտնուին սկզբնական փուլերու մէջ եւ կրնան սահմանափակուիլ ընդհանուր սկզբունքային դրոյթներով կամ փոխըմբռնման բնոյթ կրող շրջանակային յայտարարութիւններով: Այս առումով, գործընթացին հետագայ ընթացքը մեծապէս պիտի պայմանաւորուի անոր վերածուելովը կայուն, կառուցուածքային եւ գործնական քաղաքական մեքանիզմի:

Միեւնոյն ժամանակ, տարածաշրջանային բարդ եւ բազմաշերտ շահերու համատեքստին մէջ, նման գործընթացներու կենսունակութիւնը բնականաբար կախեալ է ներգրաւուած բոլոր դերակատարներու ռազմավարական հաշուարկներէն եւ քաղաքական կամքի շարունակականութենէն: Այդ առումով, կարելի է նախատեսել, որ տարբեր տարածաշրջանային ուժեր, իրենց համապատասխան մտահոգութիւններու եւ առաջնահերթութիւններու հիման վրայ, փորձեն ազդեցութիւն ունենալ գործընթացի ձեւաւորման եւ ընթացքին վրայ:

Լիբանանի պարագային, վերջին զարգացումները կը շարունակեն ընդգծել երկրի դիրքը՝ իբրեւ տարածաշրջանային մրցակցութիւններու զգայուն հանգոյց: Թէեւ վերջին օրերուն արձանագրուած նախաձեռնութիւնները չհասան յստակ կամ նշանակալի արդիւնքներու, այնուամենայնիւ ներկայ քաղաքական մթնոլորտին մէջ, մասնաւորաբար առաջիկայ ընտրական գործընթացներու համատեքստին, չի բացառուիր նոր լարուածութիւններու կամ անակնկալ զարգացումներու ի յայտ գալու հաւանականութիւնը: Այս առումով, իրավիճակի գնահատումը կը պահանջէ զգուշաւոր եւ իրապաշտ մօտեցում՝ խուսափելու համար վաղաժամ կամ չափազանցուած եզրակացութիւններէ:

Այս պատերազմը, ըստ բազմաթիւ վերլուծութիւններու, վերահաստատեց «Հըզպալլա»յի ռազմավարական նշանակութիւնը Իրանի տարածաշրջանային հաշուարկներուն մէջ: Տարածուած որոշ դիտարկումներու համաձայն՝ կազմակերպութեան դերակատարութիւնը պատմական ընթացքին սերտօրէն առնչուած է Իրանի անվտանգային եւ ազդեցութեան քաղաքականութեան առաջնահերթութիւններուն՝ միաժամանակ ունենալով նաեւ լիբանանեան ներքին քաղաքական համատեքստ: «Հըզպալլա»ն երկար ժամանակ ընկալուած էր իբրեւ Իրանի տարածաշրջանային ռազմավարութեան կարեւոր գործիքային բաղադրիչներէն մէկը, իսկ վերջին զարգացումները, ըստ այդ վերլուծական շրջանակներու, ընդգծեցին անոր շարունակական գործառնական նշանակութիւնը Թեհրանի համար:

Հետեւաբար, դժուար չէ ենթադրել, որ իրանական ղեկավարութիւնը շարունակաբար առաջնահերթութիւն կու տայ Լիբանանի հարցին՝ տարածաշրջանային որեւէ համաձայնութեան կամ քաղաքական դասաւորման ընդհանուր համաձիրին մէջ: Իրանի ընկալումով, Լիբանանի ներքին զարգացումները եւ «Հըզպալլա»յի ապագայ դերակատարութիւնը կը դիտարկուին իբրեւ անվտանգային եւ ռազմավարական կարեւոր բաղադրիչներ, որոնց նկատմամբ Թեհրանի ուշադրութիւնը կը մնայ կայուն եւ շարունակական:

Միեւնոյն ժամանակ, նման հեռանկարները բնականաբար կը յառաջացնեն տարբեր մակարդակի մտահոգութիւններ Իսրայէլի քաղաքական եւ անվտանգային շրջանակներուն մէջ: Իսրայէլեան ներքաղաքական բանավէճերուն եւ հանրային արձագանգներուն դիտարկումը ցոյց կու տայ տարբեր քաղաքական հոսանքներու՝ թէ՛ աջ, թէ՛ ձախ ուղղութիւններու ներկայացուցիչներու մօտ առկայ մտահոգութիւններու եւ վերապահումներու գոյութիւնը: Այս արձագանգները կը վկայեն, որ տարածաշրջանային հնարաւոր նոր դասաւորումներու հեռանկարը տակաւին կը մնայ զգայուն եւ բազմաշերտ քննարկումներու առարկայ Իսրայէլի ներքին քաղաքական դաշտին մէջ:

Նման արձագանգներ, տարբեր հիմնաւորումներով, կը նկատուին նաեւ իսրայէլական քաղաքական եւ անվտանգային դաշտին մէջ: Այնուամենայնիւ, հիմնարար հարցադրումը կը մնայ հետեւեալը. արդեո՞ք այս զարգացումները ընդհանուր առմամբ նպաստաւոր են Լիբանանի համար: Շատ վերլուծական շրջանակներու գնահատմամբ՝ պատասխանը հակուած է ըլլալու բացասական:

Լիբանանը, այս տեսանկիւնէն, կը գտնուի բարդ ռազմավարական միջավայրի մէջ եւ սահմանափակ կերպով կրնայ շահագրգռուած ըլլալ ո՛չ հարաւային Լիբանանի մէջ իսրայէլական ռազմական ներկայութեան կամ լարուածութեան երկարաձգմամբ, ո՛չ ալ իրանական ազդեցութեան որեւէ նոր ամրապնդումով: Երկու սցենարներն ալ, ըստ տարբեր դիտարկումներու, կը բարդացնեն ինքնիշխան, կայուն եւ լիարժէք անկախ լիբանանեան պետականութեան ամրապնդման գործընթացը: Հետեւաբար, ներկայ զարգացումները լիբանանեան շահերու դիտանկիւնէն կը գնահատուին որպէս սահմանափակ դրական կամ վերապահումով ընկալուող իրադարձութիւններ:

Դժբախտաբար, Լիբանանը այս ճգնաժամային շրջանին մօտեցաւ ներքին քաղաքական բաժանումներով, թուլացած պետական կառոյցներով եւ խոր տընտեսական ու հասարակական խոցելիութեամբ: Արդիւնքին, հակամարտութեան ծանր հետեւանքները զգալի չափով անդրադարձան լիբանանցի ժողովուրդին վրայ, որ հերթական անգամ յայտնուեցաւ տարածաշրջանային լարուածութիւններու անմիջական ազդեցութեան գօտիին մէջ:

Այսօր, իսրայէլեան կողմէն հնչող յայտարարութիւններուն համաձայն՝ կը պահպանուի հարաւային Լիբանանի որոշ հատուածներու մէջ ներկայութիւնը շարունակելու մտադրութիւնը: Եթէ նման դիրքորոշումը վերածուի երկարատեւ իրականութեան, ապա Լիբանանի անվտանգային եւ քաղաքական անորոշութիւնը կրնայ պահպանուիլ, ինչպէս նաեւ շարունակաբար բարդացնել կայունացման եւ վերականգնման հեռանկարները:

Այս ամբողջ համատեքստին մէջ բնականաբար կը ծագի առանցքային հարց մը՝ ի՛նչ ուղղութիւն պիտի որդեգրէ «Հըզպալլա»ն, եթէ Իսրայէլ իրապէս փորձէ գործել որեւէ համաձայնութեան սահմաններուն մէջ եւ պահպանել իր ստանձնած պարտաւորութիւնները: Պատերազմական փորձառութիւնը միաժամանակ բացայայտեց կարեւոր իրողութիւն մը. «Հըզպալլա»յի ռազմավարական որոշումները զգալի չափով կը ձեւաւորուին իրանեան տարածաշրջանային հաշիւներու շրջանակին մէջ, մինչ լիբանանեան պետական շահերը յաճախ կը մնան երկրորդային այդ առաջնահերթութիւններուն դիմաց:

Այս իրականութիւնը կրկին օրակարգի վրայ կը բերէ Լիբանանի ինքնիշխանութեան, պետական որոշումներու անկախութեան եւ ազգային անվտանգութեան կառավարման հիմնարար հարցադրումները՝ խնդիրներ, որոնք շարունակաբար կը մնան երկրի քաղաքական կեանքի ամենաբարդ եւ ամենանուրբ մարտահրաւէրներու առանցքին:

Այսօր, շատերու գնահատմամբ, Լիբանանի քաղաքական համակարգը տակաւին կը գտնուի այն նոյն իշխանական շրջանակներու ազդեցութեան տակ, որոնք տասնամեակներ շարունակ պատասխանատու կը նկատուին պետական կառավարման ձախողութիւններուն, համակարգային կաշառակերութեան եւ պետական հաստատութիւններու շարունակական թուլացման համար: Այս ընդհանուր պատկերէն որոշ դիտարկողներ կը փորձեն առանձնացնել վարչապետ Նաուաֆ Սալամի դերակատարութիւնը, մինչ պետական կառոյցներու զգալի մասը կը շարունակէ գործել արմատացած քաղաքական մշակոյթի եւ շահադիտական տրամաբանութեան շրջանակին մէջ:

Այս համաձիրին մէջ, եթէ լիբանանեան իշխանութիւնները իսկապէս որդեգրեն չէզոքութեան քաղաքականութիւն եւ կարողանան երկիրը զերծ պահել տարածաշրջանային հակամարտութիւններու ներգրաւումէն, ապա երկարաժամկէտ առումով կրնայ բացուիլ հնարաւորութիւն մը՝ Լիբանանը դուրս բերելու ուրիշներու մրցակցութիւններու եւ հակամարտութիւններու դաշտ ըլլալու վիճակէն: Սակայն նման հեռանկարի իրականացումը կը պահանջէ ոչ միայն քաղաքական կամք, այլեւ պետական ինքնիշխանութեան ամրապնդում եւ ազգային շահերու գերակայութիւն՝ արտաքին օրակարգերու ազդեցութենէն դուրս:

Միւս կողմէ, ներկայ զարգացումները դժուար թէ վկայեն արտաքին ազդեցութիւններու նուազման մասին: Ընդհակառակը, կը թուի, թէ Լիբանանը դարձեալ կը գտնուի տարածաշրջանային եւ միջազգային ուժերու ուշադրութեան կեդրոնը: Սակայն այդ հետաքրքրութիւնը միշտ չէ, որ կը համընկնի լիբանանցի ժողովուրդի իրական կարիքներուն եւ ակնկալութիւններուն հետ: Յաճախ առաջնահերթ կը դառնան ռազմավարական եւ աշխարհաքաղաքական հաշիւները, մինչդեռ տնտեսական վերականգնումը, պետական բարեփոխումները եւ քաղաքացիներու բարեկեցութիւնը կը մնան երկրորդական:

Այս պատճառով, զանազան դիտորդներ ներկայ գործարքը կը գնահատեն որպէս մտահոգիչ զարգացում Լիբանանի համար: Անոնց համոզումով, համաձայնութիւնը ոչ միայն չի լուծեր երկրի հիմնարար խնդիրները, այլ կրնայ խորացնել արտաքին ազդեցութիւններու մրցակցութիւնը եւ երկարաձգել այն անորոշութիւնը, որուն գինը դարձեալ պիտի վճարեն լիբանանցիները: Լիբանանի համար իսկական յաղթանակը պիտի չըլլայ այս կամ այն տարածաշրջանային ուժի գերակայութիւնը, այլ պետական ինքնիշխանութեան ամրապնդումը, ազգային որոշումներու անկախութիւնը եւ քաղաքացիներու անվտանգ ու արժանապատիւ կեանքի ապահովումը:

Այսօր Լիբանանի քաղաքական իրականութիւնը կը մնայ խորապէս բարդ եւ բազմաշերտ: Իշխանութեան կառոյցներուն մէջ դեռեւս կը զգացուի այն հին համակարգային մշակոյթը, որ երկար ժամանակ ձեւաւորած է պետութեան որոշումներու տրամաբանութիւնը՝ հիմնուած ոչ այնքան հանրային շահի, որքան փոխզիջումային ուժային եւ նեղ խմբային հաշիւներու վրայ: Վարչապետ Նաուաֆ Սալամի ներկայութիւնը շատերու կողմէ կը դիտուի որպէս հազուադէպ փորձ մը պետական վարքագիծը որոշ չափով վերադարձնելու աւելի կանոնակարգ եւ *ինստիտուցիոնալ* հունի, սակայն ընդհանուր պատկերը տակաւին կը մնայ անկայուն եւ հակասական:

Այս համաձիրին մէջ, արտաքին գործօններու ազդեցութիւնը Լիբանանի վրայ ոչ միայն չի նուազիր, այլ յաճախ կը վերաձեւաւորուի նոր աշխարհաքաղաքական իրողութիւններուն համեմատ: Տարածաշրջանային վերջին զարգացումները եւ մեծ ուժերու միջեւ գոյացած փոխըմբռնումները Լիբանանը դարձեալ կը դնեն այն դիրքին մէջ, ուր ան ոչ թէ որոշող դերակատար մըն է, այլ՝ ազդուող տարածք: Այս իրողութիւնը խոր մտահոգութիւն կը յառաջացնէ, որովհետեւ երկրի ներքին փխրունութիւնը կը զուգորդուի արտաքին շահերու մրցակցութեամբ:

Լիբանանի հիմնական մարտահրաւէրը կը մնայ պետական ինքնիշխանութեան վերականգնումը՝ այն իմաստով, որ քաղաքական որոշումները բխին նախ եւ առաջ ազգային շահերէն եւ ոչ թէ արտաքին հովանաւորութիւններէն: Առանց այս հիմնարար փոփոխութեան, որեւէ միջազգային կամ տարածաշրջանային համաձայնութիւն կրնայ վերածուիլ ժամանակաւոր կայունութեան պատրանքի՝ առանց խորքային լուծման:

Հետեւաբար, քաղաքական առումով ամենակարեւոր հարցադրումը կը մնայ ոչ թէ, ո՛ր արտաքին ուժը աւելի ազդեցիկ է Լիբանանի մէջ, այլ՝ թէ արդեո՞ք լիբանանեան պետութիւնը ի վիճակի է վերականգնել իր որոշումներու անկախութիւնը եւ դուրս գալ շարունակական փոխազդեցութիւններու ու ճնշումներու շրջապտոյտէն:

Պէյրութ

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ ԵՐԲ ՆՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԸ ՎԵՐՋԱՆԱՆ -ՄԱՍ Ա.-

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ԻՆ

ԷՏՈՒԱՐԴ ԹԱՇՃԵԱՆ

Կախուածութիւնը դիւրին է հանդուրժել՝ քանի դեռ ան լուռ կը մնայ: Ան տեսանելի կը դառնայ այն պահուն, երբ աւելի հզօր կողմը կը սկսի թուարկել թէ ի՛նչ կրնայ ետ առնել:

Մինչ Հայաստան կը փորձէ նուազեցնել իր կախուածութիւնը Ռուսիայէն եւ աւելի խորացնել իր կապերը Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու հետ, Մոսկուան սկսած է Երեւանին յիշեցնել թէ ի՛նչ կրնայ խլուիլ՝ աժան կազ, աժան քարիւղ, անմշակուած ադամանդներ, մուտք ռուսական շուկաներ, եւ այն բազմաթիւ տնտեսական ուղիները, որոնք տասնամեակներ շարունակ Հայաստանը կապած են Ռուսիոյ: Քիչ հայերու պէտք է բացատրել, որ հայկական արտադրանքներու նկատմամբ վերջերս սահմանուած ռուսական սահմանափակումները եւ ուժանիւթի մատակարարումներուն վերաբերող սպառնալիքները առանձին տեխնիքական հարցեր չեն: Այդ բացատրութեան կարիքը չկայ: Անոնք կը հասկցուին այնպէս ինչպէս որ են՝ ճնշում, որ կը գործադրուի նոյն ուղիներուն միջոցաւ, որոնք երկար ժամանակ Հայաստան կապած են Ռուսիոյ: Անոնք կը ցուցադրեն թէ կախուածութիւնը ի՛նչ տեսք կ'ունենայ, երբ կախեալ երկիրը կը սկսի ինքնուրոյն ընտրութիւն կատարել:



Ահա այն պահը, երբ զեղչերն ու նպաստաւոր պայմանները կը դադրին զեղչ ու նպաստաւոր ըլլալէ եւ կը վերածուին կարգապահեցման միջոցի:

Տարիներ շարունակ հայկական հասարակութեան ըսուած է, թէ Ռուսիան Հայաստանին աժան կազ կը մատակարարէ: Այժմ յիշատակուող թիւը մօտաւորապէս 177.5 տոլար է՝ իւրաքանչիւր 1,000 խորանարդ մեթրի դիմաց, գին մը որ Մոսկուան կը հակադրէ Եւրոպայի շատ աւելի բարձր սակերուն: Առաջին հայեացքով՝ ասիկա որպէս առատաձեռնութիւն կը հնչէ: Սակայն Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ գտնուող կազի առեւտրային յարաբերութիւնը աւելի բարդ է քան այս պարզ նշանաբանը: «Կազփրոմ»-ը՝ Ռուսիոյ պետական վերահսկողութեան տակ գտնուող ուժանիւթային հսկայ կազմակերպութիւնը, որ գլխաւորաբար ծանօթ է բնական կազի արտադրութեամբ եւ արտածումով, կազ կը վաճառէ Հայաստանի սահմանին վրայ՝ «Կազփրոմ Արմենիա»-ին, որ ինքն ալ ամբողջութեամբ կը պատկանի ռուսական «Կազփրոմ»-ին: Նոյն ռուսական սեփականութեան ենթակայ կառոյցը այնուհետեւ կը վերահսկէ ներքին կազամատակարարման համակարգը, որուն միջոցաւ հայկական ընտանիքներն ու ձեռնարկութիւնները շատ աւելի բարձր կարգաւորուած սակերով կազ կը գնեն:

Այստեղ, չեմ ուզեր ըսել, որ սահմանային գինը կարեւոր չէ: Անշուշտ որ, ներմուծման աւելի ցած գին մը կրնայ տակաւին ազդեցութիւն ունենալ վերջնական սակին վրայ: Սակայն այն քաղաքական պնդումը, թէ Ռուսիան պարզապէս «Հայաստանին աժան կազ կու տայ», կը ծածկէ վերահսկողութեան կառուցուածքը: «Կազփրոմ»-ը կը վաճառէ «Կազփրոմ»-ին, իսկ հայ սպառողը կամ պիզնէսը գինին կը հանդիպի միայն այն բանէն ետք, երբ կազը կ'անցնի ռուսական սեփականութեան շղթայէն: Իրական հարցը միայն այն չէ թէ սահմանին կազը որքան կ'արժէ, այլ նաեւ՝ ո՛վ կը վերահսկէ սահմանէն մինչեւ հայկական ընտանիք հասնող ուղին:

Շատ յաճախ ինքնիշխանութիւնը կը կորսուի այդ ուղիին մէջ: Փոքր պետութիւնը կը բացայայտէ թէ որքան ինքնիշխան է, երբ առօրեայ կեանքի համակարգերը կրնան իր դէմ գործածուիլ: Ուժանիւթը ամէնէն ակնյայտ օրինակն է, սակայն նոյն տրամաբանութիւնը կը վերաբերի առեւտուրին, պաշտպանութեան, աշխատանքային արտագաղթին, դրամատնային համակարգին, ենթակառոյցներուն, տեղեկատուութեան եւ սննդամթերքի արտածման: Երկիր մը կրնայ ունենալ դրօշ, սահմանադրութիւն, բանակ, դեսպանատուներ, ընտրութիւններ եւ աթոռ ՄԱԿ-ին մէջ, մինչդեռ կրնայ շարունակել ապրիլ այնպիսի ցանցերու մէջ, որոնք ուրիշ ուժի մը կարելիութիւն կու տան պատժել զինք անհնազանդութեան համար:

Ասիկա Հայաստանի աւելի խոր խնդիրն է: Սխալը միայն Ռուսիոյ վրստահիլը չէր, այլ նաեւ՝ չափազանց շատ ազգային համակարգեր մէկ ուղղութեան մէջ կեդրոնացնելը: Տասնամեակներ շարունակ Ռուսիան եղած է անվտանգութեան երաշխաւորը, զէնքի մատակարարը, ուժանիւթի աղբիւրը, արտագաղթելներու հիմնական աշխատաշուկան, կարեւոր առեւտրական գործընկերը, միջնորդը, հովանաւորը եւ ռազմավարական նշանակութիւն ունեցող գոյքերու սեփականատէրը կամ շահագործողը: Նման կեդրոնացումը վտանգաւոր է նոյնիսկ երբ հովանաւորը բարեկամ է: Երբ հովանաւորը բարկանայ, այդ կը վերածուի ազգային խոցելիութեան:

Բայց Ռուսիան միայնակ չստեղծեց կախուածութիւնը: Հայկական կառավարութիւնները ընդունեցին զայն, օգտագործեցին զայն եւ շատ անգամ օգտուեցան անոր կարճաժամկէտ յարմարութենէն: Աժան ուժանիւթը օգտակար կը թուէր: Ռուսական անվտանգութեան երաշխիքները, շուկային հասանելիութիւնը, եւ շրջանին մէջ դերը անհրաժեշտ, գործնական ու անխուսափելի կը թուէին: Դժուար աշխարհագրական միջավայրի մէջ, փակ սահմաններով եւ թշնամական դրացիներով շրջապատուած, այս ընտրութիւնները միշտ ալ անտրամաբանական չէին: Փոքր պետութիւնները յաճախ կ'ապրին փոխզիջումներու շնորհիւ:

Սակայն փոխզիջումը կը վերածուի կախուածութեան, երբ այլընտրանք չկայ: Ներկայ ճգնաժամը այժմ կը բացայայտէ այդ կախուածութեան թաքուն գինը: Մոսկուան պէտք չունի ներխուժելու Հայաստան՝ ճնշում բանեցնելու համար: Ան կրնայ հարցականի տակ առնել կազի գինը, սահմանափակել ներմուծումները, սպառնալ արտօնեալ մատակարարումներուն, խթանել քաղաքական պատմութիւններ կամ հայերուն յիշեցնել, որ միլիոնաւոր առօրեայ որոշումներ կախեալ են այն համակարգերէն, որոնց վրայ Ռուսիան ազդեցութիւն ունի: Ահա թէ ինչու ինքնիշխանութիւնը չի կրնար չափուիլ միայն անկախութեան մասին արտասանուած խօսքերով: Ինքնիշխանութիւնը կը չափուի ինքնուրոյն որոշման գինը կրելու կարողութեամբ:

Այդ գինը այժմ կը սկսի տեսանելի դառնալ: Բայց այստեղ ուրիշ վտանգ մը ալ կայ՝ այս բոլորը վերածել պարզ Ռուսիա ընդդէմ Արեւմուտք բանավէճի: Ատիկա չափազանց դիւրին պիտի ըլլար եւ հայերը պիտի առաջնորդէր դէպի նոր պատրանք: Արեւմուտքն ալ Հայաստանը ձրի պիտի չփրկէ՝ ինչպէս ոչ մէկ մեծ ուժ կ'ընէ: Եւրոպական Միութիւնը, Միացեալ Նահանգները, Ֆրանսան, Հնդկաստանը, Իրանը եւ Հայաստանի որեւէ այլ գործընկեր պիտի գործեն իրենց շահերուն, առաջնահերթութիւններուն, ընտրութիւններուն, պիտճէներուն, շրջանային հաշիւներուն եւ սահմաններուն համաձայն: Ռուսական կախուածութիւնը ուրիշ ուժի մը վրայ կախուածութեամբ փոխարինելը ռազմավարութիւն պիտի չըլլար, այլ ուղղութեան փոփոխութիւն՝ առանց սովորութեան փոփոխութեան:

Հետեւաբար հարցը այն չէ թէ Հայաստանը պէ՞տք է Ռուսիան ընտրէ որպէս անոր "տէր", թէ՞ Արեւմուտքը: Հարցը այն է, թէ ինչպէ՛ս Հայաստանը կրնայ նուազեցնել այն իրավիճակներուն թիւը, որոնց մէջ որեւէ արտաքին ուժ կրնայ զինք պատժել իր կատարած ընտրութիւններուն համար:

Պէյրութ

ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԵՂԻՆԱԿ ԽՈՐԷՆ ԱՐԱՄՈՒՆԻԻ ՆՈՐ ՎԷՊԸ

Հինգշաբթի, 25 Յունիս, 2026, երեկոյեան ժամը **7:00ին,**
Center for Armenian Arts հաստատութեան մէջ՝
250 N. Orange St., Glendale, CA 91203:



Թեհրանի պատգամը եւ Մոսկուայի լռութիւնը. ինչո՞ւ Իրանը շտապեց շնորհաւորել Փաշինեանը

ԻՐԱՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ԻՆՉ ԿԸ ՊԱՏՄԷ ԹԵՀՐԱՆԻ ԾՏԱՊՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

Ակներեւ է անշուշտ, որ մինչեւ այս նիւթին հրապարակուիլը Ռուսաստանը տակաւին չէ շնորհաւորած Հայաստանի գործող վարչապետին առաջնորդած քաղաքական ուժին տարած յաղթանակը:

Խօսքը բնականաբար Ազգային Ժողովի ընտրութիւններուն մասին է, որուն արձագանգները տակաւին կրնան շարունակուիլ:

Յստակ չէ տակաւին, թէ ինչ հունով պիտի աւարտին ներ-քաղաքական զարգացումները, սակայն պարզորոշ է, որ Հայաստանի այս ընտրութիւնները կ՚առանձնանան իրենց արտաքին «պարունակ»ով:

Մէկ կողմէ Հայաստանի հանդէպ ստեղծուած հետաքրքրութիւնը, եւ միւս կողմէ արտաքին հիմնական խաղացողներու իրար հանդէպ ունեցած յաճախ ոչ բարեացակամ մօտեցումները մեր երկիրը դրած են նոր վիճակներու առջեւ:

Հոս անշուշտ ԱՄՆ-ի եւ Ռուսիոյ կեցուածքներէն բացի կարեւորութեամբ մը կը շեշտուի Թուրքիոյ, Ատրպէյճանի, Վրաստանի, բայց մանաւանդ Իրանի տեսակէտ-մօտեցումը, որն ինքնին ունին կարճաժամկէտ, բայց մանաւանդ «երկարակեաց» ազդեցութեան մը ընդհանուր յայտարարը:

Ի հարկէ այստեղ զարմանալու պատճառներ կան, որ ինչպէս եւ ինչ պայմաններու տակ Իրանը չհետեւեցաւ Ռուսիոյ օրինակին, ու առաջ երթալով «սրտագին» շնորհաւորանք մը «նուիրեց» Հայաստանի իշխող մեծամասնութեան:

Այս բոլորին մասին փորձած եմ վերլուծում մը ներկայացնել, միշտ ի մտի ունենալով, որ վերջին օրերուն տեղի ունեցած դէպքերը ու նաեւ ԱՄՆ-Իրան համաձայնութիւնը իրենց կարեւոր դերն ունեցած են Իրանի դիրքորոշման հասունացման առընթեր:

Թեհրանէն շնորհաւորանքներ Փաշինեանին. Իրանը կը շեշտէ Երեւանի հետ համագործակցութեան շարունակականութիւնը

Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի ընտրութիւններուն արդիւնքներուն լոյսին տակ, Իրանի ղեկավարութիւնը շարունակեց իր շնորհաւորական ուղերձները Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին՝ ընդգծելով երկկողմ յարաբերութիւններու զարգացման եւ տարածաշրջանային կայունութեան նկատմամբ իր յանձնառութիւնը:

Իրանի արտաքին գործոց նախարար Ապպաս Արաղչին հայերէնով կատարած գրառումով շնորհաւորեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ անոր ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը՝ ընտրական յաղթանակին առիթով: Իր գրառման մէջ Արաղչին նշած է, թէ Թեհրանը ուրախ է, որ ստեղծուած են բարենպաստ պայմաններ՝ շարունակելու եւ ամրապնդելու Իրան-Հայաստան յարաբերութիւններուն մէջ ձեւաւորուած դրական ու շարժուն ընթացքը՝ կառուցողական համագործակցութեան միջոցով:

Ի դէպ Արաղչիէն առաջ, Հայաստանի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Մասուտ Փեզեշքեան նոյնպէս շնորհաւորական ուղերձ մը յղած էր Հայաստանի վարչապետին:

Իր ուղերձին մէջ Իրանի նախագահը շնորհաւորած էր Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններու յաջող կազմակերպումը եւ Նիկոլ Փաշինեանի գլխաւորած քաղաքական ուժին արձանագրած յաղթանակը: Փեզեշքեան ընդգծած էր, որ Հայաստանի ժողովուրդին կողմէ կառավարութեան նկատմամբ վերահաստատուած վստահութիւնը կը վկայէ խաղաղութեան, զարգացման, կայունութեան եւ տարածաշրջանային համագործակցութեան ամրապնդման ուղղուած քաղաքականութեան շարունակման ցանկութեան մասին:

Իրանի նախագահը նաեւ վստահութիւն յայտնած էր, որ վարչապետ Փաշինեանի կառավարման նոր փուլին, երկու երկիրներուն միջեւ աւելի ընդարձակ եւ կառուցողական համագործակցութիւնը պիտի նպաստէ վերջին տարիներուն ձեւաւորուած արգասաբեր յարաբերութիւններու յաւելեալ խորացման: Անոր համաձայն, այդ ընթացքը ոչ միայն պիտի ծառայէ երկու ժողովուրդներու շահերուն, այլեւ պիտի նպաստէ տարածաշրջանին մէջ խաղաղութեան, կայունութեան եւ զարգացման ամրապնդման:

Ուղերձի աւարտին, Մասուտ Փեզեշքեան խաղաղութիւն, բարօրութիւն եւ յաջողութիւն մաղթած էր Հայաստանի կառավարութեան եւ բարեկամ հայ ժողովուրդին՝ վերահաստատելով Թեհրանի պատրաստակամութիւնը՝ շարունակելու հարեւան Հայաստանի հետ բազմակողմ համագործակցութիւնը:

Թէ ինչո՞ւ Իրանը «առաջ անցնելով» շնորհաւորեց Փաշինեանը

Հարցը Իրանի շնորհաւորանքը դիտարկելու մասին չէ միայն, այլ հասկնալը, թէ Իրան ինչպէս կը յարաբերի Հայաստանի հետ: Հաւանաբար այս պատճառով ալ շատերու նման ես եւս զարմանքով արձանագրեցի այն իրողութիւնը, որ Թեհրանը, կարծես «առաջ անցնելով», շտապեց շնորհաւորել Նիկոլ Փաշինեանը եւ վերահաստատել Երեւանի հետ գործակցութիւնը շարունակելու իր պատրաստակամութիւնը: Այս քայլը ինքնին քաղաքական պատգամ մըն էր եւ արժանի է աւելի խոր վերլուծման

Հայաստանի իշխանութիւնները կարողացան գոյացնել պարզ մեծամասնութիւն մը եւ այս պատկերով պիտի կարենան կազմել գումարման նոր Ազգային ժողովը՝ ունենալով վաթսունէ աւելի պատգամաւորներ:

Յետընտրական ընթացքէն ալ մեծ դժգոհութիւններ դեռ չկան: Յունիսի 7-ի լոյս 8-ի գիշերը շատ հանդարտ յետընտրական գիշեր մըն էր: Յաջորդ օրը մարդիկ, Հայաստանի քաղաքացիները, սովորականին պէս իրենց գործերուն ետեւն էին, եւ պարզ էր, որ յետընտրական շփոթ կամ աղմուկ մը պիտի չըլլար:

Ընդդիմութիւնը, որ այս անգամ աւելի «սառն» հայեացքով գնահատեց նոր իրադրութիւնը, կարծես քիչ մը ուշացած փորձեց ուշքի գալ եւ անմիջապէս մեծ բեռը նետել Գագիկ Ծառուկեանի եւ, հետեւաբար, ԲՀԿ-ի խաղադաշտը: Քուէներու ստուգում, «կասկածելի» քուէարկութեան մասին խօսակցութիւններ, դիմում Կեդրոնական ընտրական յանձնաժողովին, ապա վերջնական վերահաշուարկ եւ, ի վերջոյ, առանց ԲՀԿ-ի կազմուելիք նոր Ազգային ժողով:

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Անցեալ կիրակի օրը ընդդիմութեան համար երկրորդ քննութեան պահն էր, որ նոյնպէս աւարտեցաւ անմխիթար պատկերով, որովհետեւ աւելի քան յայտնի է, որ ընդդիմադիր ճակատը չունի այն ներուժը, որ կրնայ շարժում ստեղծել փողոցին վրայ:

Հիմքի մասին չեմ խօսիր, որովհետեւ ինչ ալ ըլլային ընտրութեան արդիւնքները, մենք տակաւին այնպիսի քաղաքական մշակոյթ չունինք, ուր ընդդիմութիւնը կրնար ոտքի կանգնիլ, գլխարկը հանել եւ Փաշինեանին դիմաց ըսել. «Հալալ է քեզի, դուն ես յաղթողը, հիմա միասին աշխատինք աւելի լաւ Հայաստան մը կառուցելու համար»:

Այս մէկը առայժմ աւելի շատ երազ է, եւ կրնայ երկար ժամանակ ալ այդպէս մնալ, այնքան ատեն որ քաղաքական սերնդափոխութիւն չէ կատարուած, իսկ մեծ դրամագլուխները, որոնք տարբեր կողմերէ բռնած են ընդդիմադիր դաշտը, կը շարունակեն իրենց հին ոճը:

Հոս զարմանալի բան չկայ, ինչպէս նաեւ իրական հեռանկար չկայ, որ ներկայ ընդդիմութիւնը կրնայ լուրջ կերպով խանգարել նոր կառավարութեան գործունէութիւնը:

Ասոնցմէ անդին, անշուշտ, գոյութիւն ունի արտաքին գործօններու խնդիրը, իսկ այդ խնդրականութիւնը մեծապէս կապուած է Ռուսաստանի դիրքորոշումին հետ: Չեմ գիտեր, թէ իշխանութիւնն ու ընդդիմութիւնը որքանով պիտի արդարացուած ըլլան Մոսկուայի մօտեցումներուն առջեւ, սակայն ներքին համոզում մը ունիմ, որ այս փուլին Ռուսաստան չունի յաւելեալ ծանրութիւն ստեղծելու եւ Հայաստանի տնտեսութիւնը հարուածի տակ դնելու իրական մտադրութիւն:

Բայց այս բոլորին կողքին, իրապէս զարմանալու չափ հետաքրքրական է Իրանի Իսլամական Հանրապետութեան կեցուածքը եւ Փաշինեանի վերընտրութիւնը ողջունելու շտապողականութիւնը: Այս մօտեցումը արժանի է լուրջ գնահատականներու եւ վերլուծութեան:

Նոր Իրանը այլեւս «սարերու ետին» չէ: Ան, հակառակ իր կրած վնասներուն եւ վիրաւորուած վիճակին, շատ հաւանական է, որ մօտ ապագային վերածուի աւելի ազդեցիկ եւ մեծ ներուժ ունեցող ուժի:

Թէ ինչո՞ւ Իրան, որոշ իմաստով, «կտրեց» ռուսական լռութիւնը Հայաստանի հարցով, տակաւին ամբողջովին յստակ չէ: Սակայն գուցէ այս փուլին այդ յստակութիւնը նոյնքան ալ կենսական չէ:

Կարեւորը Իրանի առողջ եւ իրապաշտ կեցուածքն է: Կը թուի, թէ գործող ընդդիմութիւնը, հակառակ Իրանի մասին հնչեցուցած դրական խօսքերուն, Թեհրանի համար որոշիչ գործօն մը չէ: Պաշտօնական Թեհրանը կը նախընտրէ խօսիլ եւ գործել պաշտօնական Երեւանի հետ, եւ այս իրողութիւնը պարզ շնորհաւորանքի մը սահմաններուն մէջ չի մնար:

Առանց հեռուները տանող թերխաշ վարկածներու, առանց ամէն ինչ ԱՄՆ-Իրան հնարաւոր համաձայնութիւններուն կամ Մոսկուայի նախասիրութիւններուն կապելու, կարելի է արձանագրել միայն մէկ փաստ. Թեհրանը իր խօսքը ըսած է:

Այժմ կը մնայ հասկնալ այդ խօսքին իրական արժէքը եւ խորութիւնը:

Թեհրանը իր խօսքը ըսաւ. պետութիւնները զգացումներու չէ, շահերու լեզուով կը խօսին:

Այս ամբողջ պատկերը, անշուշտ, չի նշանակեր, թէ Իրան կատարած է աշխարհաքաղաքական շրջադարձ մը կամ թէ Թեհրան-Մոսկուա յարաբերութիւններուն մէջ նոր հակադրութիւն մը կը ձեւաւորուի: Նման եզրակացութիւնները, առնուազն այս փուլին, շտապողականութեան արդիւնք պիտի ըլլային:

Սակայն անտեսել կարելի չէ նաեւ այն իրողութիւնը, որ Իրանը, այս անգամ, նախընտրեց չսպասել ուրիշները եւ իր քաղաքական լեզուով յստակացնել իր առաջնահերթութիւնը: Իսկ այդ առաջնահերթութիւնը Հայաստանի Հանրապետութիւնն է եւ անոր օրինական իշխանութիւնը:

Այս առումով, Թեհրանի ուղերձները պարզ դիւանագիտական քաղաքավարութիւն չէին: Անոնք կը վկայէին, որ Իրանը Հայաստանի հետ իր յարաբերութիւնները կը դիտէ երկարաժամկէտ հաշուարկներով եւ չի պատրաստուիր այդ յարաբերութիւնները պայմանաւորել ներքաղաքական ուժերու փոփոխութեամբ կամ արտաքին ուժերու նախասիրութիւններով:

Հաւանաբար այստեղ է հիմնական պատգամը: Թեհրանը, հակառակ իր առջեւ ծառացած բազմաթիւ մարտահրաւէրներուն, կը շարունակէ Հայաստանը ընկալել որպէս կայունութեան, հաղորդակցութեան եւ տարածաշրջանային հաւասարակշռութեան կարեւոր գործընկեր: Այդ պատճառով ալ անոր համար երկրորդական են հայաստանեան ներքաղաքական համակրանքները կամ ընդդիմադիր դաշտին մէջ եղած համակրելի անունները:

Եթէ Ռուսաստանի լռութիւնը, վաղը խախտուի, եւս իր բացատրութիւնները պիտի ունենայ: Սակայն Իրանի շտապողականութիւնը արդէն իսկ իր բացատրութիւնը տուած է:

Պաշտօնական Թեհրանը ընտրած է խօսիլ Երեւանի հետ, ոչ թէ սպասել ուրիշներու խօսքը:

Եւ գուցէ ամբողջ պատմութեան մէջ ամէնէն ուշագրաւ հանգամանքն ալ հոն է, որ Իրանը ոչ միայն շնորհաւորեց Հայաստանի գործող իշխանութիւնը, այլեւ անուղղակի կերպով յիշեցուց, որ պետութիւնները, ի վերջոյ, իրենց քաղաքականութիւնը կը կառուցեն ոչ թէ զգացումներու, այլ շահերու, շարունակականութեան եւ երկարատեւ հաշուարկներու վրայ:

Թեհրանը իր խօսքը ըսած է:

Այժմ հերթը Հայաստանինն է՝ հասկնալու այդ խօսքին խորութիւնը, արժէքը եւ այն հնարաւորութիւնները, որոնք կրնան ծնիլ այդ ուղերձներուն ետին կանգնած քաղաքական մտածողութենէն:

Երեւան

ԹՄՄ «ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ՝ ԲԵՄԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԽԻԶԱԽ ՈՒՂԻՒՆ ՎՐԱՅ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

ՊԱՅԾԻԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Բանաստեղծութեան իշխան Վահան Թէքէեանի անունը կրող այս Մշակութային Միութիւնը իր առաքելութեան հիմքին դրած է այն համոզումը, թէ մշակոյթը ազգի գոյատեւման ամէնէն հզօր երաշխիքն է: Հետեւաբար, ան տարիներ շարունակ եղած է հայապահպանման, կրթադաստիարակչական, արուեստի աշխատանքի եւ ազգային արժէքներու փոխանցման անփոխարինելի կեդրոն մը:

Այսօր եւս Թէքէեան Մշակութային Միութիւնը կը շարունակէ իր լուսաւոր առաքելութիւնը՝ մնալով հայ մշակոյթի կենդանի տաճար մը, ուր անցեալի ժառանգութիւնը կը միախառնուի ներկայի ստեղծագործ ոգիին եւ ապագայի խոստումին՝ ի փառս հայ ժողովուրդի մշակութային անմար ներկայութեան:

Յունիս 12-ին, հաճոյքով եւ գեղարուեստական բաւարարուածութեան զգացումով հետեւեցայ ամերիկացի թատերագիր Քէն Լուտվիկի «Թենոր մը գտէք» կատակերգութեան բեմադրութեան, որուն դերակատարները, իրենց սահուն, արագահունչ եւ բնական երկխօսութիւններով, կենդանութիւն ու թարմութիւն հաղորդեցին ներկայացման՝ հանդիսատեսը պահելով ժպիտի, սպասումի եւ անընդհատ հետաքրքրութեան մթնոլորտի մէջ:

Պէյրութի Թէքէեան Մշակութային Միութեան թատերական մասնաճիւղը մշտապէս հայ բեմարուեստի սիրահարներուն առջեւ ներկայացած է ընտիր եւ բարձրաճաշակ բեմադրութիւններով՝ հաւատարիմ մնալով գեղարուեստական որակի եւ մշակութային առաքելութեան իր աւանդին: Անոր բեմը տարիներու ընթացքին լուսաւորած են տաղանդաշատ եւ հեղինակաւոր բեմադրիչներ, ինչպիսիք են Պերճ Ֆազլեանը, Գրիգոր Տեկիրմենճեանը, Տիրան Սարգիսեանը, Վաչէ Ատրունին ու այսօր՝ Սուրէն Խտշեանը, որոնց արուեստագիտական տեսլականն ու նուիրումը Թատերախումբին շնորհած են մնայուն փայլ եւ արժանապատիւ տեղ հայ մշակութային կեանքին մէջ: Այս հարուստ աւանդութիւնը շարունակելով՝ մասնաճիւղը կը մնայ բեմական արուեստի կենդանի օճախ մը, ուր սերունդներ կը հաղորդուին հայ թատրոնի ոգիին եւ ստեղծագործ ուժին:

Այս բեմական արուեստի խիզախ ուղին պարզապէս թատերախումբի մը գոյատեւման տարեգրութիւնը չէ, այլ կենդանի վկայութիւնը մշակոյթի հանդէպ անսասան նուիրումի, հայ լեզուի մշտահոս շունչին եւ արուեստի այն ստեղծագործ ուժին, որ անտեսանելի կամուրջներով կը միաւորէ սերունդները՝ հարստացնելով համայնքային հոգեւոր կեանքը: «Երուանդ Օտեան» թատերախումբը իր բեմական յաջողութիւններով շարունակած է ջերմօրէն վառ պահել հայ թատրոնի ջահը՝ անոր լուսաւոր ճառագայթը փոխանցելով նոր սերունդներուն՝ իբրեւ ժառանգութիւն եւ ներշնչում:

Այս տարի՝ 2026-ին, թատերախումբը, վերանորոգուած կազմով եւ նոր եռանդով ներշնչուած, կրկին վերադարձաւ բեմ՝ հանդիսատեսին ներկայացընելով ժամանակակից ֆարսի նշանաւոր հեղինակներէն Քէն Լուտվիկի «Թենոր մը գտէք» կատակերգութիւնը՝ Սուրէն Խտշեանի բեմադրութեամբ եւ թատերախումբի պատասխանատու Կարէն Տարագճեանի առաջնորդութեամբ՝ վերածելով բեմը կենդանի ծիծաղի, շարժումի եւ արուեստի հմայիչ տօնակատարութեան մը:

Լուտվիկի այս հանրածանօթ ստեղծագործութիւնը դասական ֆարսի փայլուն օրինակ մըն է, ուր թիւրիմացութիւնները, անակնկալ զարգացումները, արագընթաց իրադարձութիւնները եւ սրամիտ երկխօսութիւնները կը միախառնուին՝ ստեղծելով ծիծաղի եւ զուարճանքի անվերջ շղթայ մը: Ներկայացումը, իր կենդանի ռիթմով եւ բեմական աշխուժութեամբ, յաջողեցաւ պահել հանդիսատեսին ուշադրութիւնը առաջին վայրկեանէն մինչեւ վերջին վարագոյրը:

Պէտք է առանձնայատուկ գնահատանքով յիշատակել գաղութիս ծանօթ եւ փորձառու երիտասարդ դերակատարները՝ Կարէն Տարագճեան, Գոհար Քերոբեան, Սիմոն Եափուճեան, Լուսինէ Տաքէսեան, Յարութ Մանուկեան, Հուրի Պապահէքեան, Կարօ Գինոյեան եւ Սեդա Պոյաճեան-Լէփէճեան, որոնք իրենց համոզիչ մարմնաւորումներով, դերային ճկունութեամբ եւ բեմական բնական ներկայութեամբ կրցան լիարժէք կերպով փոխանցել հեղինակին հիւմորը եւ արժանանալ հանդիսատեսի ջերմ գնահատանքին ու առատ ծափողջոյններուն:

Արդարեւ, կարելի է անվարան արձագանգել, թէ յիրաւի յաջող խաղարկութիւն մըն էր «Թենոր մը գտէք»ը, շքեղ ու ճաշակաւոր բեմայարդարումով, հոգեպարար երաժշտական ուղեկցութեամբ, իսկ բեմադրութիւնը՝ արուեստի եւ փորձառութեան ներդաշնակ միաձուլում մը: Ամէն տեսարան իր հետ կը բերէր նոր ժպիտ, նոր զուարթութիւն եւ նոր հրճուանք՝ հանդիսատեսը պահելով անընդհատ հետաքրքրութեան եւ ուրախ սպասումի մէջ:

Այս արժէքաւոր յաջողութեան առիթով, սրտագին շնորհաւորանքներս կը յղեմ նախ Լիբանանի Թէքէեան Մշակութային Միութեան Տեղական վարչութեան, գլխաւորութեամբ ատենապետ՝ տոքթ Յակոբ Փափազեանի, որ ամէն ջանք ի գործ դնելով լիբանանահայ թատերասէր հանրութեան ներկայացուց ԹՄՄ Երուանդ Օտեան թատերախումբի տարեկան արգասիքը՝. «Թենոր մը գտէք» թատերգութիւնը, ապա ԹՄՄ-ի թատերական վարչութեան, բեմադրիչ Սուրէն Խտշեանին, խումբի պատասխանատու Կարէն Տարագճեանին եւ դերասանական ամբողջ կազմին, որոնք իրենց տաղանդով, նուիրումով եւ բեմի հանդէպ սիրով կերտեցին յիշատակելի երեկոյ մը՝ լեցուն ծիծաղով, կենսուրախութեամբ եւ արուեստի գեղեցկութեամբ:

Աւելցնեմ, թէ ըստ հրապարակուած յայտարարութիւններուն, «Ե. Օտեան» թատերախումբը «Թենոր մը գտէք» կատակերգութեան վերջին երկու ելոյթները պիտի ներկայացնէ Շաբաթ, 20 եւ Կիրակի 21 Յունիսին, Պուրճ Համուտի Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ, երեկոյեան ժամը 8:30-ին:

Պրոտուէյի եւ Լոնտոնի Ուեսթ-Էնտի բեմերուն վրայ մեծ յաջողութիւն արձանագրած այս խելահեղ ու զուարճալի կատակերգութիւնը այսօր լիբանանահայ հանդիսատեսին պարգեւեց անվերջ ծիծաղի պահեր՝ մինչեւ իսկ արցունքներ հասցնելով անոր աչքերուն:

Պէյրութ

Պուլիս

ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ «ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ»

Պէյօղլուի Լուսաւորիչ դպրաց դաս-երգչախումբը շաբաթավերջին հանդէս եկաւ իրերայաջորդ երկու կարեւոր համերգով: Այսպէս, երգչախումբի ելոյթները մաս կազմեցին Իսթանպուլի երաժշտական փառատօնին, որ այս տարի 54-րդ անգամ կը կազմակերպուի: «Երաժշտական ուղղութիւն» ծրագրի շրջանակներէն ներս, Լուսաւորիչ դպրաց դաս-երգչախումբը քսան վայրկեան պարբերութեամբ երկու համերգով հանդէս եկաւ. իւրաքանչիւրը տեւեց 50 վայրկեան:

Սոյն փառատօնը կազմակերպուած է՝ Իսթանպուլի մշակոյթի եւ գեղարուեստի հիմնարկին (IKSV) կողմէ, հովանաւորութեամբ «Պորուսան»-ի:

Լուսաւորիչ երգչախումբին այս փառատօնին ընդգրկուիլը, անշուշտ, կարեւոր նշանակութիւն ունեցաւ հայկական երաժշտութեան ծանօթացման տեսակէտէ: Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցան իրերայաջորդ երկու համերգները, որոնց ընթացքին երգչախումբը հայ եւ օտար երգահաններու գործերը մեկնաբանեց՝ խմբավար Յակոբ Սամիկոնեանի մականին ներքեւ, երգեհոնի ընկերակցութեամբ Սերժ Սնըրի: Յայտագրին մաս կազմած հայ յօրինողներն էին՝ Եկմալեան, Կարա-Մուրզա, Կոմիտաս, Աւետիսեան, Ալթունեան, Յովհաննիսեան, Յարութիւնեան եւ Խաչատուրեան:

Երկու համերգներու աւարտին ալ ունկնդիրները ջերմ ծափահարութիւններով ողջունեցին Լուսաւորիչ երգչախումբին կողմէ արձանագրուած փայլուն յաջողութիւնը՝ մանաւանդ, որ բոլորին տեսակէտէ անկրկնելի հնարաւորութիւն մըն էր հայկական երաժշտութեան՝ այսքան բարձր կատարողական մակարդակով խումբի մը միջոցաւ հաղորդ դառնալը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ 120-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

«Հայե՛ր, միանանք մէկ սիրտ, մէկ հոգի Ազգաշինութեան վսեմ գործին շուրջ...»:

ԵՆՈՎՔ ՊԱԼԻԿԵԱՆ

Բարեգործութիւնը հայ ժողովուրդի պատմութեան նման հին պատմութիւն ունի: Դժբախտաբար, նախաքրիստոնէական շրջանին վերաբերեալ բաւարար տեղեկութիւններու չենք հանդիպած:

Քրիստոնէութեան մուտքով, Հայ եկեղեցիին շնորհիւ եւ արքաներու հովանաւորութեամբ հիմնուած են բազմաթիւ դպրոցներ, եկեղեցիներ, որբանոցներ՝ վանականներու խնամակալութեան տակ: Զանազան պատերազմներու ու արշաւանքներու ընթացքին բազմաթիւ հայեր, մանաւանդ երիտասարդներ, հեռացած են մայրենի հողէն: Բարեբախտաբար, բոլոր հայահոծ նոր կեդրոններուն մէջ հիմնած են բարեսիրական կազմակերպութիւններ եւ վարժարաններ: Օրինակ, Հայաստանի մէջ՝ Գէորգեան ճեմարանը, Մոսկուայի մէջ՝ Լազարեան ճեմարանը, Հնդկաստանի մէջ՝ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը: Շարունակենք. Վենետիկի մէջ՝ Մուրատ Ռաֆայէլեան ուսումնարանը, Կիպրոսի մէջ՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, Թիֆլիսի մէջ՝ «Կովկասի Բարեգործական ընկերութիւնը», Պոլսոյ մէջ՝ Համազգային Բարեգործական ընկերութիւնը եւ այլն:

Պէտք չէ մոռնանք նաեւ, որ Աւետարանական եւ Կաթողիկէ համայնքներն ալ իրենց գործնական մասնակցութիւնը բերած են դպրոցաշինութեան եւ բարեգործութեան մէջ:

20-րդ դարուն սկիզբը պատմական Հայաստանի գաւառներուն մէջ կը տիրէր ծայրայեղ թշուառութիւն: Քաղաքական կազմակերպութիւններ իրենց ազատագրական եւ հերոսական պայքարին ընթացքին կարելիութիւններ չունէին բաւարար օգնութիւն հասցնելու այդ դժբախտ հայրենակիցներուն:

Մինչ այդ, թուրքը, չեչենը եւ քիւրտը ծանրօրէն ճնշում կը բանեցնէին հայ ժողովուրդին վրայ, յատկապէս գաւառներուն մէջ:

1894-1896 թուականներուն թրքական բանակը եւ փողոցային ջոկատները 300 հազարէ աւելի հայեր սպաննեցին, տասնեակ հազարաւոր որբեր, մանուկներ, մայրեր անտէր ու անօթի մնացին:

Դժոխքէ անցած այդ դժբախտ հայորդիներուն վիճակը ցնցած ու անհանգիստ ըրած էին Պողոս Նուպար փաշան, Աղաթոն պէյը եւ ընկերները: Նկատի ունենալով այս անհանդուրժելի կացութիւնը, Պողոս Նուպար փաշա իր ապարանքը կը հրաւիրէ ազգասէր, բարեկեցիկ տասը ականաւոր մասնագէտներ՝ երկրաչափ, բժիշկ, հայագէտ, փաստաբան, դիւանագէտ ու տնտեսագէտ անձնաւորութիւններ, եւ 15 Ապրիլ 1906-ին, Սուրբ Զատկուան օրը կը հիմնեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը՝ նպատակ ունենալով.

1.Օժանդակել հայ ժողովուրդին եւ անոր հայրենիքին մտաւոր եւ բարոյական զարգացման

2. Օգնել անոնց նիւթական եւ տնտեսական բարելաւման ծառայող ամէն ձեռնարկներու եւ հրատարակութիւններու

3. Քաջալերել այդ նպատակները յառաջ բերելու ծառայող ամէն ձեռնարկ:

Այս կազմակերպութիւնը մարդասիրական հաստատութիւն մըն է եւ որեւէ քաղաքական կամ առեւտրական հանգամանք չունի: Ամերիկեան միջազգային գնահատող կազմակերպութիւններ, ինչպէս «Boston Globe»-ը եւ «Charity Watch»-ը, ՀԲԸ Միութիւնը դասած են որպէս թիւ մէկ բարեսիրական կազմակերպութիւն, բաղդատելով զայն «American Red Cross» եւ «Jewish Charity» կազմակերպութիւններուն հետ: Այս գնահատականը մեծ պատիւ է հայութեան համար:

ՀԲԸ Միութիւնը՝ 120 տարեկան, միշտ երիտասարդ, գործունեայ եւ օրինաբեր Միութիւն մը եղած է ու պիտի շարունակէ ըլլալ: Ունինք մէջբերում մը. «ՀԲԸ Միութիւնը Աստուծոյ շնորհքն է հայ ժողովուրդին, եւ անոր տաք ոգին թող մտնէ ամէն հայու սիրտը», կ՚ըսէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան երջանկայիշատակ վեհափառ Գարեգին Ա. Յովսէփեանց:

ՀԲԸՄ-ի հիմնադրութեան նախօրեակին, Արեւելեան Հայաստանի տարագրեալ ժողովուրդի վերապրումին բացառիկ օժանդակութիւններ կատարած են հիմնադիրները: 1906-էն վերջ, հայապահպանումի ծառայող բոլոր կազմակերպութիւններուն, եկեղեցիներուն, որբերուն, ուսանողներուն ու Հայրենիքին թիկունք կանգնելով՝ նպաստած է Հայրենիքի ամրապնդման ու հզօրացման՝ Հայաստանի Առաջին Անկախ Հանրապետութեան, Խորհրդային Հայաստանին եւ ապա՝ անկախացած Հայաստանին: Իշխանութիւնները կրնան փոխուիլ, բայց հայ ժողովուրդը եւ հայրենիքը յաւերժական են:

ՀԲԸՄ-ը հայապահպանումի սրբազան առաքելութեան համար օժանդակած է մէկ միլիառ տոլարէ աւելի նպաստ:

ՀԲԸՄ-ը գլխաւորաբար եւ առանց որեւէ սահմանափակումի կ՚ընդգրկէ՝ ընդհանուր առմամբ յառաջացումը հայ ժողովուրդի կրթական, ընկերային, մշակութային, ֆիզիքական եւ հոգեկան զարգացման, պահպանումը եւ յաւերժացումը Հայ ինքնութեան եւ ժառանգութեան ու աջակցութիւնը մարդասիրական ճիգերու:

ՀԲԸ Միութիւնը այս օրերուն հայապահպանումի համար տարեկան 60 միլիոն տոլարէ աւելի կը տրամադրէ հայ ժողովուրդի բարօրութեան համար:

ՀԲԸ Միութիւնը հիմնուած է ազգասիրութեամբ նուիրուած ու հերոսական ոգիով սնած անձնաւորութիւններու կողմէ՝ հայ ժողովուրդին եւ Հայրենիքին յաւերժութիւնը ապահովելու սրբազան առաքելութեան համար:

ՀԲԸ Միութեան կոչը համայն հայութեան համար հետեւեալն է.

«Հայեր, միանանք մէկ սիրտ, մէկ հոգի
Ազգաշինութեան վսեմ գործին շուրջ,
Մոռնալով վէրքերն ու ոխն երէկի՝
Ժամն է, որ ըլլանք վաղուան աչալուրջ»:

ԴԱՐԻ ՊՈՒՏԻ ԱՆՄԱՀԱԿԱՆԸ

ՄԱՐԻԱՆՆԱ ԳԷՈՐԳԵԱՆ

Բարձունքը մերն է, տողերքը՝ չկան,
Տողերքն աւելի բարձրում մնացին ...

Խաչիկ Մանուկեանի այս գլուխգործոցը համազգային խտացուած հոգու ցաւն ու ցասումն է՝ բնորոշ ազնուաբարոյ մտաւորականին:

«Դարի Պուտի» բնոյթը փոթորկուն ու հեղեղոտ է, պոռթկուն ու եռանդուն: Իր եռացող բնաւորութեամբ, հայ տղամարդուն վայել ազդեցիկ կերպարով յաղթահարում է ճակատագրի ծանր բեռը, արհաւիրքները ու կեանքի խաչը: Բայց անսասանօրէն հաւատը սրտում, լուսաբացը տեսնելու մոլուցքով՝ սուրբ Էջմիածնի մայր տաճարից հնչող զանգերի ղօղանջներով, վերածնունդը խորհրդանշող աւետիսի արարումով: Եւ տաղերից հիւսուած մեղեդին է, որ մեղմում է սրտի ու հոգու ցաւը, վիշտն ու կարօտը: Գերբնական ուժով, բարձր մտաւորականին յարիր պահուածքով, իր վիրաւոր սիրտը դարմանող հաղորդութեամբ կարողանում է արարել ու ստեղծագործել Դարի Պուտը: Կեանքի մղձաւանջային ճանապարհը վեհութեամբ անցած՝ նա կերտել է բազմաթիւ ազգային արժէքաւոր գործեր՝ իր հզօր գրչով: Խաչիկ Մանուկեանի միւռոնապատ գրիչը դեռ իր սրբազան առաքելութիւնն ունի:

«Հերոսի դափնիներով անմահացած չեմ ուզում, իրե՞ն եմ ուզում, բայց Ես ո՞վ էի, որ նման շքեղութիւն ունենայի. այլեւս Տիրոջ հայեացքով է նայում եւ... իմ որդին չէ այլեւս, ՆԱ իմ ՀԱՅՐՆ է, ՈՐ ՅԵՐԿԻՆՍ Է ...»:

Ահա այս տողերն են, որ աղօթք դարձած հնչում են Մեծն Պուտի դողացող շուրթերից ...

ԱՆՄԱՀԱԿԱՆԸ Նա է Հերոսը, Հայը, Զաւակը՝ Վաչագան Խաչիկի Մանուկեանը մայր բուհի մագիստրոս, գրող, հրապարակախօս, գրքերի հեղինակ, հայրենիքի նուիրեալ, ազգային հերոս:

«Երբ չկայ երազանք, տգեղանում է լուսինը, իսկ աստղազարդ երկինքը կորցնում է փայլը...

Եթէ դատարկ է ներսդ, դու ակամայից աշխարհի ամենատգեղ մարդն ես դառնում: Աներազանք մարդը տիեզերական ողջ գեղեցկութեանը անհաղորդ է մնում:

Նիւթին գերուած էս ժամանակներում երբեք չկորցնէք ձեր ներաշխարհի գեղեցկութիւնը...»: Վաչագան Մանուկեան:

Չնայած երիտասարդ տարիքին հասուն ու իմաստուն խոհերով, մշտապէս հայրենիքի, ազգի խնդիրները սրտում, հզօր երկիր ունենալու անպաթոս երազանքը մտքում, որոնք, սակայն, օդում սաւառնող փշրանքներ դարձան: Խորը խոհափիլիսոփայական մտահորիզոնով, ազնուագոյն հայորդի, ում մտքերը անվերջ կարելի է կարդալ, մտորել դրանց շուրջ ու որպէս կարգախօս, ուղենիշ օգտագործել. «Երբ պատրաստ չես խօսելու, երբ ասելիքդ սահուն չես կարող հանրայնացնել, ուրեմն՝ պիտի լռել կարողանաս ու սպասես քո խօսելու իրական ժամանակին:

Բազմակողմանի զարգացած անհատականութիւն, որը մշտապէս իր գրում ու խօսքում շնորհակալութիւն է յայտնում Արարչին իւրաքանչիւր հարցում: Կոմիտասեան հնչիւններից մինչեւ Բախի աստուածային երաժշտութիւնն է նրա հոգում սաւառնել, ջերմացրել, յուզել: Վաչագան Մանուկեանի «Չկորցրենք լոյսը» գիրքը գրել է հերոսին վայել, ծանրակշիռ մտքերով, յորդորներով, գաղափարով: Անսահման մարդասիրութիւնն, խիստ ու լաւ դաստիարակութիւնն անմիջապէս զգացւում է գրից: Նրա գրչից լոյս ու բարութիւն է աւետւում:

«Ինչքան լաւ բան կայ թող կատարուի բոլորիդ հետ ու խաղաղ, անցնցում մնայ երկիրը մեր»:

Մեծ հաւատ, յոյս, դրական էներգիա կայ նրա գրի շարադրած մտքերում: Ու ամենակարեւորը՝ յաղթական ոգին է, որը միանգամից փոխանցւում է ընթերցողին:

Ազգային հերոսի կերպարը իր սխրանքներով կատարելութեան հասնող է: Նրա հայրենասիրութիւնը սահմաններ չի ճանաչել: Հայրենիքի ու իր ազգի անմնացորդ սիրուց ծնուել են գաղափարներ, մտքեր, կատարած գործեր ու արարքներ, որ ոչ մի բառով չես կարող նկարագրել:

Յանուն լաւ ու բարեկեցիկ երկիր ունենալու երազանքի, նրա միտքն ու հոգին հանգիստ չունէր: Ելել էր պայքարի թէ՞ խելքով, թէ՞ զէնքով: Վաչագանը իր հօր տղան է, հայրենիքին հերոս տղան է:

(Շար.ը տեսնել էջ 11)

Հայ Պատմական Եղափոխութեան եւ Պատմագիտութեան Մասին Նոր եւ Գիտարարական Աշխատութիւն մը

Քննական Նախաբան Արեւմտեան Հայաշխարհի Հազարամեայ Պատմութեան Թագաւորութիւններէ մինչեւ Զարթօնք Քաղաքականութիւն եւ Մշակոյթ Առաջին Հանգրուանը Տասներորդէն Տասնըհինգերորդ Դարեր

Prolegomenon to the Millennial History of the Western Armenian World – From 'Kingdoms' to an Awakening Politics and Culture The First Phase Tenth to Fifteenth Centuries

Հեղինակ՝ ՓՐՈՖ. ՍԵՌԱ Պ. ՏԱՏՈՅԵԱՆ

Փրոֆ. Սեղա Պ. Տատոյեանի հեղինակութեամբ՝ Քննական Նախաբան Արեւմտեան Հայաշխարհի Հազարամեայ Պատմութեան - Թագաւորութիւններէ մինչեւ Զարթօնք - Քաղաքականութիւն եւ Մշակոյթ. Առաջին Հանգրուանը Տասներորդէն Տասնըհինգերորդ Դարեր (Prolegomenon to the Millennial History of the Western Armenian World – From Kingdoms to an Awakening - Politics and Culture - The First Phase Tenth to Fifteenth Centuries (Los Angeles: The Western Prelacy, 2026. ISBN 978-1-967180-02-8. 255 p.s).

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի առաջնորդարանի Մատենաշարին երրորդ եւ ամէնէն ծաւալուն հատորն է Փրոլեկոմենոնը: Իսկ Մատենաշարը, նոյն հեղինակէն, կը կոչուի "Հիմնահարցեր եւ Հանգրուաններ Արեւմըտեան Հայաշխարհի Կազմաւորումին մէջ/Fundamentals and Phases in the Making of the Western Armenian World": Տատոյեան կը գրէ իր Եզրակացութեան մէջ, "Կարելի չէ ունենալ նախահայեցութիւն (foresight) առանց յետահայեացութեան (hindsight): Ուրեմն կայ յարատեւ անհրաժեշտութիւն հասկնալու համար պատմութիւնը, գիտնալու համար թէ ուրկէ՛ եւ ինչէ՛ կու գանք, եւ ուր ու դէպի ի՞նչ կ'երթանք, կամ պէտք է որ ուղղուինք: Ա՛յս է նպատակը Արեւմըտեան Առաջնորդարանի Մատենաշարին:"

Մերձաւոր Արեւելքի մէջ հայ պատմական եղափոխութեան, եւ առկայ պատմագիտութեան մասին գիտարարական եւ քննական աշխատութիւն մը ըլլալու կողքին՝ հատորը սումմա (summa) մըն է, այսինքն գերազանցապէս տեսաբանական ամփոփում մը Տատոյեանի զանազան պատմագիտական տեսութեանց, թէ՛ Մատենաշարին մէջ եւ թէ՛ ընդհանրապէս իր գրականութեան:

Իր տեսակին մէջ առաջինը, եւ ըստ խորագրին, *Փրոլէկոմենոն*ը սովորական յառաջաբան չէ: Տառացիօրէն (յունարէնէ եւ լատիներէ եկած) կը նշանակէ՝ ան ինչ որ կ'ըսուի կամ պէտք է որ ըսուի նախապէս, բանի մը սկզբնաւորութեան ("that which is said beforehand): Անիկա նախապատրաստութիւն մը աշխատութեան կամ պարագայի մը համար: Տատոյեանի համար *Փրոլէկոմենոն*ը քննական-վերլուծական հարթակ մըն է բնորոշելու կենսական խնդիրները եւ մեթոտները հասկնալու եւ գրելու Արեւմտահայ Հայաշխարհին տակաւին անգիր պատմութիւնը: Հատորը ոչ միայն քննական, այլ նոյնիսկ յեղափոխական վերլուծում մըն է հայ պատմագրութեան մէջ թէեւ ընդունուած սակայն ոչ-հիմնաւորուած յարացոյցներուն (paradigms) դէմ:

Թոմաս Քունի [Thomas S. Kuhn, 1922-1996, The Structure of Scientific Revolutions] 'գիտը', յարացոյց կը նշանակէ ընդհանուր կերպով ընդունուած տեսական շրջանակ (framework), որ կը պարունակէ որոշ տեսութիւններ, կարծիքներ, արժէքներ, եւ ուսումնասիրութեան միջոցներ տուեալ ընկերութեան մը կամ որոշ խումբի մը յատուկ, ինչպէս գիտական, քաղաքական, եւայլն: Յարացո՛յցը կ'որոշէ թէ ինչպիսի խնդիրներ Էական ու անհրաժեշտ են եւ ինչպիսի հարցումներ պէտք է որ առաջադրուին հասնելու համար ընդունելի ու ճիշդ պատասխաններու:

Հետեւաբար, վերբերելու համար նիւթին - այսինքն Արեւմտեան Հայաշխարհին պատմութիւնը - տարբեր եւ ուրոյն բնոյթը եւ նո՛ր յարացոյցներու անհրաժեշտութիւնը, Տատոյեան ամփոփ կերպով կը ներկայացնէ տասերորդ դարէն ետք ժողովուրդին մեծամասութեան շարժը դէպի արեւմուտք եւ հարաւ, մանաւանդ՝ քաղաքական եւ մշակութային կառոյցները կորսնցուցած ազգին արտասովոր զանցակերպումը (metamorphosis), նոր եւ Արեւելեանէն շատ աւելի ընդարձակ բնակավայրի մը, Արեւմտեան Հայաշխարհին զարգացումը: Աշխատութիւնը կանգ կ'առնէ Միջին դարերու վերջաւորութեան՝ այս աշխարհին պայմաններուն բերումով Կանուխ կամ Նախա-Զարթօնքի (proto-renaissance) մը իրականացումով: Յաջորդ հանգրուանները Օսմանեան ապա՝ Սաֆավիտ կայսրութեանց ընթացքին տարբեր նիւթեր են:

Նպատակներով եւ մեթոտաբանական տեսակէտէ, Տատոյեանի այս աշխատութիւնը փաստարկում (argument) մըն է ի նպաստ 'Արեւմտեան եւ Արեւելեան Հայաշխարհներու' պատմագիտական յարացոյցին եւ ի դէմ 'Կեդրոն եւ Շրջամաս', 'Հայրենիք եւ Սփիւռք' յարացոյցներուն: Իբրեւ այդպիսին եւ ըստ խորագրին՝ հատորը փրոլէկոմենոն մըն է Արեւմտեան Հայաշխարհին հազարամեայ պատմութեան, որ տակաւին կը սպասէ լուրջ պատմագիտական ուսումնասիրութեան եւ պատմականացումի:

Իրողապէս, հայ եւ Մերձաւոր Արեւելեան միջ-գործօնական (interactive) պատմութեան մէջ Տատոյեանի ամբողջ գիտական ասպարէզն ու գրականութիւնը (տասնվեց հատոր եւ հարիւրէ աւելի ուսումնասիրութիւններ) վիճարկումներ եւ փաստարկումներ են աւանդական եւ այսպէս կոչուած արդիական-առարկայական պատմաբանութեանց, նաեւ՝ կիսա-առասպելական պատումներուն ու գրականութեան եւ ժողովրդական մակարդակներու վրայ: Իր կարծիքով, եթէ միայն բոլո՛ր հայոց, բոլոր ժամանակներու եւ տեղերու մէջ պատմակա՛ն փորձառութեան հիման վրայ քննականօրէն դիտուած եւ հասկցուած ըլլային բոլոր 'հայկական բաները', այսօր պիտի ունենայինք տարբեր եւ շատ աւելի իրական, պայծառ եւ հետաքրքրական պատմութիւն մը, մասնաւորաբար՝ անգիր Արեւմտեան Հայաշխարհին մասին:

Միջմարզային (interdisciplinary) եւ պամագիտական (historiographic) տիալեքթիք տեսանկիւններով եւ մեթոտաբանութեամբ, այս հատորը (իր տասնըվեցերորդը) եւս կը հիմնուի ցարդ աննկատ մնացած սակայն հիմնական դրուագներու եւ երեւոյթներու վրայ, իբրեւ հակաթեզեր (antitheses) առկայ պատմական տեսկէտներու: Տատոյեան կը բացատրէ թէ տասերորդ դարուն ամբողջ արեւելեան Փոքր Ասիան արդէն կը գտնուէր իսլամական հակակշռի տակ: Նախապէս, եօթերորդ դարէն ետք՝ իրենց հայրենի հողերով եւ շրջանային բնակավայրով (habitat, ecumene) հայերը մեծամասնութեամբ կը գտնուէին իսլամական աշխարհին մէջ եւ յաճախ անոնց իշխանութեան տակ: Բացառութիւն են Հայկական Կիլիկիան (1080-1375) եւ աւելի քան վեց դար ետք՝ Առաջին Հանրապետութիւնը (1918). Հակառակ այս իրողութեան եւ իրենց աշխարհին բոլոր ժողովուրդներուն եւ ուժերուն հետ հայոց ուղղակի յարաբերութեանց եւ կարեւոր գործունէութեան, Տատոյեան կ'ըսէ թէ տասնըչորս դարերու ընթացքին հայոց պատմական փորձառութիւնը չէ արժանացած պատմագիտական լուրջ վերլուծումի: Մեծ քանակութեամբ նիւթ կայ արաբական աղբիւրներու մէջ: Ընդհանրապէս հայ-իսլամական յարաբերութիւնները իւրայատուկ մարզ մը կը կազմեն հայ եւ Մերձաւոր Արեւելեան պատմագիտութեանց մէջ, որ գրեթէ Տատոյեանի անձնական սատարն է, որուն նուիրած է վեց հատորներ եւ տասնեակ ուսումնասիրութիւններ (1991-էն ի վեր):

Ինչպէս Տատոյեան կը բացատրէ Փրոլեկոմենոնին մէջ, Արեւելեանէն շատ աւելի ընդարձակ եւ գործօն Արեւմտեան Հայաշխարհը ուղղակիօրէն եւ օրկանականօրէն մաս կը կազմէր Մերձաւոր Արեւելեան աշխարհին, անոր ժողովուրդներուն եւ իրադարձութեանց: Միջերկրականի հիւսիս-արեւելեան անկիւնը բնական հրաշալի մահիկ մը, Հայկական Կիլիկիան՝ Արեւմտեան Հայաշխարհին ամէնէն ցցուն եւ երկարատեւ միաւորը, ժամանակագրական եւ տեսական մուտքը, առաջին հանգրուանն է նիւթին: Անիկա շրջանին ամէնէն կարեւոր կէտերէն մէկուն վրայ կը գտնուէր մէկ կողմէ քաղքեդոնական Բիւզանդիոնի ապա՝ Լատին Խաչակիրներու եւ միւս կողմէ իսլամական կայսրութեանց միջեւ: Ինչպէս միշտ, եւ աւելի քան նախապէս, հայերը կը գտնուէին հակամարտ ուժերու միջեւ, Տատոյեանի եզրով՝ միջնաշխարհեան (mesopolitan, between two poleis) դժուարին կացութեան մէջ: Ինչպէս միշտ՝ միջնաշխարհեան կացութեան ճնշումներուն ենթակայ, Արեւմտեան Հայաշխարհը գծեց ուրոյն հունը եւ քաղաքական-մշակութային ինքնութիւնը: Նոյնը կատարեց Արեւելեան Հայաշխարհը տարբե՛ր պայմաններու տակ եւ տարբե՛ր կերպերով: Այս երկու հայաշխարհները չէին կրնար ըլլալ նման, ոչ ալ մէկը միւսին առաջնահերթ կամ գերակայ: Հոսկէ՝ Տատոյեանի Արեւմտեան Հայաշխարհին հազարամեայ պատմութիւնը վերականգնելու պատմագիտական աշխատանքին նշանակութիւնը իբրեւ անյետաձգելի աշխատանք:

Ա՛յս է Փրոլեկոմենոնին նպատակը:

Ըստ հեղինակին, առնուազն վերջին հարիւրամեակին ընթացքին ընդհանուր կերպով ընդունուած 'հայրենիք-սփիւռք' 'կեդրոն-շրջամաս', 'Հայաստան-արտասահման' տարազումները չեն կրնար ըլլալ 'բնական', այսինքն իրողական յարացոյցներ: Պատճառը պարզապէս բացակայութիւնն է ապրուած իրականութիւններու են եւ պատմագիտական փաստերու: Ընդհանրապէս, չկան 'բնական' այսինքն անդրժելի եւ բացայայտ կարծուած յարացոյցներ, մանաւանդ պատմագիտութեան մէջ, որ բոլոր պատումներուն, նաեւ պատմութիւններուն քննական ուսումնասիրութիւնն է:

Հայ պատմագրութեանց եւ պատմամտածողութեան 'բնական' հաւատալիքներէն մէկն է նայիլ եւ ներկայացնել բոլոր այսպէս կոչուած 'հայկական բաները' իբրեւ միակ եւ յարատեւ գործընթաց, փրոսէս մը, որուն գլխաւոր հերոսը կամ դերակատարը (protagonist) հայ 'ազգն' է: Անիկա ունի, ինչպէս կը կարծուի, բացայայտ, յստակ եւ յաւերժական ինքնութիւն եւ էութիւն (permanent essence identity): Ազգային պատմութեան բեմը (stage) 'հայրենիքը', 'հայրենի հողն' է, թէ ֆիզիքական եւ թէ վերացական իմաստով: Անկէ դուրս 'սփիւռք'ն է, կամ 'արտասահմանը' է, որ կ'ըլլայ եւ է կեդրոնական մասին շրջամասը (periphery):

Տատոյեան կը բացատրէ թէ 'կեդրոն-շրջամաս'ի յարացոյցը կ'ենթադրէ միակտուր եւ հաստատուն պատմական կեդրոն մը, այսինքն 'Հայրենիք' մը, որ առաջնահերթ է, եւ անոր շուրջ երկրորդական եւ յեղյեղուկ հայ համայնքներ տարբեր բնակավայրերու մէջ, որ 'Սփիւռք'ն է: Ըստ իրեն, 'կեդրոն-շրջամաս'ի պատմական յարացոյցը միջնադարէն կը տիրապետէ ոչ միայն պատմագրական այլ նաեւ բոլոր ընկերային գիտութիւններուն եւ մշակոյթին վրայ: Դժբախտաբար, հայակեդրոն (armenocentric) պատմաբանութեան հետեւանքով հայոց ընդհանուր Մերձաւոր Արեւելքի մէջ պատմական փորձառութեան փոքր մէկ մասը միայն անցած է պատմագրութեան՝ սակայն միակողմանի եւ պակասաւոր կերպով: Երբ Արեւմտահայ Զարթօնքի հեղինակներէն, Մխիթարեան Միքայէլ Չամչեանց 1780-ականներուն իր 'տիեզերական' պատմութիւնը հրատարակեց միջնադարու մտայնութեամբ եւ լեզուով, հայակեդրոն յարացոյցը պաշտօնապէս անցաւ նոր ժամանակներու պատմագրութեան, եւ տակաւին գործօն է, զարմանալի կերպով: Սովետական Հանրապետութեան ժամանակ եւ Պաղ Պատերազմին, հայրենիք-սփիւռքի տարազումը քաղաքականցաւ եւ դարձաւ գրեթէ վերջնական, հակառակ պատմական հիմնաւորումներու բացակայութեան, եւ ճիշդ այդ պատճառով.- որովհետեւ մինչ այդ չէր նկատուած ձախողութիւնը տեսած չըլլալու հայոց պատմական հարուստ փորձառութեան իրողական պատկերը Մերձաւոր Արեւելքի մէջ: Կան նաեւ զուտ քաղաքական նկատառումներ եւ շահեր այս տարազումին պարագային:

Իբրեւ հետեւանք 'կեդրոն-շրջամասի' յարացոյցին, եւ դժբախտաբար, Արեւմտեան Հայաշխարհին մէջ հայոց մեծամասնութեան աւելի քան հազարամեայ պատմութիւնը եւ գոյատեւման պայքարը քշուած է էութենական (ontological) աղջամուղջի մէջ, կորսնցնելով իր հիմնական պատմական կարեւորութիւնը ընդհանուր հայոց պատմութեան եւ պատմամտածողութեան մէջ: Աշխարհագրականօրէն, նաեւ քաղաքականօրէն, Սփիւռքը տակաւին կը նկատուի, եւ ինքզինք կը տեսնէ իբրեւ 'հայրենիք'էն դուրս հաւաքում մը պատահական եւ յարափոփոխ 'համայնք'ներու կամ 'գաղութ'ներու: Իբրեւ հետեւանք՝ սփիւռքահայը 'բնիկ հայ' չէ, այլ 'արտասահմանցի':

(Շարունակելի)

ՀՈՒՆՋՔԻ ՕՐՀՆԱԲԵՐ ԱՌԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ՎԱՐԺԱՐԱՆԻՍ 75-ԱՄԵԱԿԻ ՊՍԱԿԻՆ

ՊԷՅՐՈՒԹԻ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ՄԻՋՆ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԷՄ ԵՒ ՍԻԼՎԱ ՍԻՄՈՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ 2025-2026 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍԸ

Ամէն տարեվերջ իր հետ կը բերէ ուրախութեան, հպարտութեան եւ երախտագիտութեան գեղեցիկ զգացումներ: Այսօր, Վահան Թէքէեան վարժարանի Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի մեր սիրելի փոքրիկները կը հաւաքուին բեմին վրայ՝ ներկայացնելու իրենց առաջին քայլերուն, ձեռքբերումներուն եւ անմեղ ժպիտներուն պտուղը: Այս տարուան հանդիսութիւնը կը ստանայ յատուկ խորհուրդ, որովհետեւ ան կը նուիրուի Վահան Թէքէեան վարժարանի հիմնադրութեան 75-ամեակին:

Արդարեւ, Վարժարանիս հոգաբարձութեան հովանաւորութեամբ, Շաբաթ, 13 Յունիս 2026-ին, Յակոբ Պարսամեան սրահը դարձաւ կրթական ու մշակութային շունչով լեցուն: Տեղի ունեցաւ Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի ամավերջի հանդիսաւոր հանդէսն ու վկայականաց բաշխումը: Ներկայ էին ԹՄՄ-ի Հիմնադիրներու Մարմնի անդամներ, ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Աւետիս Տաքէսեան եւ անդամներ, Հոգաբարձութեան ատենապետուհի՝ Տիկ. Անի Լաչինեան Մակարեան եւ անդամներ, ինչպէս նաեւ ԹՄՄ-ի Տեղական Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Յակոբ Փափազեան եւ անդամներ, ծնողներ ու բարեկամներ, որոնք իրենց ներկայութեամբ զարդարեցին այս յիշարժան օրուան մթնոլորտը:

Հանդիսութիւնը սկսաւ մեր սիրասուն փոքրերուն Լիբանանի, Հայաստանի Հանրապետութեան եւ Վահան Թէքէեան Վարժարանի քայլերգերու քաղցրահունչ երգեցողութեամբ եւ ներկաներու յոտնկայս ունկնդրութեամբ: Մանկապարտիզպանուհի Տիկ.Վերա Սունկուլեան Հաննա կատարեց բացման խօսքը:

Հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը յագեցած էր եռալեզու երգերով ու զանազան պարերով, որոնք բարձրաճաշակօրէն պատրաստուած էին մանկապարտէզի ուսուցիչներուն կողմէ: Տեղի ունեցաւ նաեւ տեսերիզի ցուցադրութիւն, որուն մէջ ներկաները վայելեցին մանկապարտէզի գործունէութիւնները Վարժարանի 75-ամեակի առիթով:

Վահան Թէքէեան Վարժարանի կրթական խօսքն ու ուսումնական տարեշրջանի զեկոյցը փոխանցեց Տնօրէնուհի Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեան, որ ներկայացուց մեր վարժարանի կրթադաստիարակչական գործունէութիւնները: Ան ներկաները ողջունելէ ետք նկատել տուաւ, թէ մեր վարժարանը պիտի բոլորէ իր հիմնադրութեան պանծալի 75-ամեակը, ըսելով «Այս սրբազան վայրին մէջ եօթանասունհինգ տարիներ շարունակ կերտուած է սերունդներու առաջին քայլերը, հնչած են մանկական ծիծաղները, և աճած են մեծ երազանքները:»

Տնօրէնուհին երախտագիտութիւն յայտնեց Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններուն՝ դրուատելով անոնց ցուցաբերած անսակարկ նուիրուածութիւնը, ջանքերը եւ շարունակական աջակցութիւնը: Ան նաեւ անդրադարձաւ Մանկապարտէզի փոքրիկներուն 2025-2026 ուսումնական տարեշրջանին ընթացքին արձանագրած բազմաթիւ ձեռքբերումներուն եւ իրականացուցած կրթական, մշակութային ու դաստիարակչական գործունէութիւններուն:

Շարունակելով իր խօսքը՝ ան նշեց, թէ պատերազմի ամենադժուար ու անորոշ օրերուն, երբ մարտահրաւէրներն ու մտահոգութիւնները կը ծանրանային բոլորին վրայ, վարժարանը անսասան մնաց իր կրթական առաքելութեան մէջ: Հակառակ բոլոր դժուարութիւններուն ու խոչընդոտներուն, ապահովուեցաւ, որ ուսումնական գործընթացը չընդհատի, եւ աշակերտները շարունակեն առցանց ստանալ իրենց կրթութիւնն ու դաստիարակութիւնը ապահով եւ հոգատար միջավայրի մը մէջ:

Վերջապէս, Տնօրէնուհին իր երախտագիտութիւնը յայտնեց վարժարանիս հովանաւորող ԹՄՄ Հիմնադիրներու Մարմնին՝ ատենապետութեամբ Տիար Յակոբ Գասարճեանին, որ հայապահպանման առաքելութեան հաւատարիմ մնալով՝ շարունակաբար կը զօրակցի վարժարանիս առաքելութեան եւ զարգացման, ինչպէս նաեւ յատուկ երախտագիտական խօսք ուղղեց շնորհաշատ բարերարներ ՝ Տէր եւ Տիկին Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններուն, անոնց ցուցաբերած անսակարկ նուիրուածութեան եւ շարունակական աջակցութեանց համար: Ապա հպարտութեամբ եւ ուրախութեամբ յայտարարեց, թէ շնորհիւ Տէր եւ Տիկ. Սէմ եւ Սիլվա Սիմոնեան բարերարներուն վարժարանիս կրթաթոշակը 7-րդ տարին ըլլալով՝ 2026-2027 տարեշրջանին դարձեալ պիտի ըլլայ անվճար:

Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ վարժարանիս Հոգաբարձութեան՝ ատենապետութեամբ Տիկին Անի Լաչինեան Մակարեանին, մեր սիրելի ծնողներուն՝ իրենց վստահութեան համար, ինչպէս նաեւ ուսուցչակազմին եւ պաշտօնէութեան՝ իրենց նուիրեալ ծառայութեան եւ անխոնջ աշխատանքին համար:

Հոգաբարձութեան եւ Տնօրէնութեան անունով, ան գնահատանքի խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք իրենց աջակցութեամբ նպաստած են վարժարանիս գոյերթին ու յառաջընթացին: Վերջինս շնորհաւորեց մեր շրջանաւարտները՝ մաղթելով անոնց յաջողութիւն, բեղուն ապագայ եւ կանաչ ճանապարհ:

Տնօրէնուհիին խօսքէն ետք ոգեւորիչ երաժշտութեան ներքոյ եւ ներկաներուն յոտնկայս ծափողջոյններուն տարափին տակ՝ հանդիսաւոր կերպով մուտք գործեցին շրջանաւարտները: Շրջանաւարտներու անունով ուղերձ կարդաց Արեգ Պոտրունեան (հայերէն), Րօյ Ալ Սապղ (արաբերէն) եւ Ճիլի Թորմաքճեան (անգլերէն), որոնք իրենց անմեղ առոգանութեամբ փոխանցեցին իրենց մտորումները մեր վարժարանին նկատմամբ: Տեղի ունեցաւ վկայականաց բաշխման արարողութիւնը ձեռամբ Հոգաբարձութեան փոխ ատենապետ Տիար Պերճ Արապեանի, Տնօրէնուհի Տիկ. Սեւանա Սեմերճեան Տարագճեանի, Մանկապարտիզպանուհի Տիկ. Վերա Սունկուլեան Հաննայի եւ Ծաղիկ դասարանի դաստիարակչուհի Օրդ. Դալար Գէորգեանի:

Շրջանաւարտները բեմին առջեւ ընդունեցին շնորհաւորութիւններ:

Մինչ կը փակենք ուսումնական այս տարեշրջանի էջը, վստահութեամբ ու յոյսով կը բանանք վաղուան նոր հորիզոնները՝ հաւատարիմ մնալով գիտութեան, կրթութեան եւ ազգային արժէքներուն: Թող Աստուած օրհնէ մեր աշակերտները եւ առաջնորդէ զանոնք դէպի նորանոր յաջողութիւններ ու ձեռքբերումներ:

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Ուխտագնացութիւն դէպի Էրգիր

Օր երրորդ

ՍՈՒՐԷՆ Թ. ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԳԴ, փրոֆէսոր

Հայ ազգային-ազատագրական պայքարի կարեւոր օրրաններից Մուշ քաղաքը գտնւում է Եփրատի ափից ոչ հեռու, մեղրագէտի ձախակողմեան վտակ Մուշ գետի ափերին: Բնակավայրի անունը կապում են Հայաստանի հնագոյն մուշունի, Մուշկ ցեղերի կամ «Մշուշ»-ի հետ, որով սովորաբար առաւօտեան պատւում է ողջ Մուշի դաշտը: Հարաւային կողմում մեր առջեւ բարձրանում էին տաւրոս լեռնաշղթայի Սասունի լեռները՝ Ծիրկատար եւ Կորդուխ լեռնագագաթներով: Հեռւում երեւում էր նաեւ Արջգլոր լեռը: Մուշի գետը, որ ժամանակին աշխատացնում էր 10-12 ջրաղաց, ոռոգում քաղաքի ու նրա շրջակայքի բանջարանոցները եւ քաղաքը բաժանում է երկու մասի, շատ է տկարացել: Հայկական լեռնաշխարհի հնագոյն բնակավայր լինելու մասին վկայում է Վանի թագաւոր Մենուա Ի-ի (810-786 թթ. մ.թ.ա.) սեպագիր արձանագրութիւնը: Ազդեցիկ էին Գայլ Վահան Մամիկոնեանի հիմնադրած Մուշի նշանաւոր բերդի աւերակները: Լաւ է, որ գոնէ պահպանուել եւ մեզ են հասել Մուշում 13-15-րդ դդ. գրուած հայերէն մի քանի ձեռագրեր: Մինչեւ IV դ. Մուշը պատկանում էր Սլկունի, իսկ յետոյ՝ Մամիկոնեան նախարարներին: 8-րդ դ. Մուշն անցաւ Բագրատունիներին, իսկ 851-852 թթ. դարձաւ արաբների դէմ ուղղուած ազատագրական պայքարի կենտրոնը: 852 թ. ձմռանը Մուշի Ս. Փրկիչ եկեղեցում խութեցի Հովնանի ու նրա մարտիկների ձեռքով սպանուեց արաբ հրոսակների ղեկավար Եուսուֆը: Ցաւօք, XVI դ Մուշը նուաճուել է թուրքերի կողմից: 1860-ական թթ., Զեյթունի դէպքերի ազդեցութեան ներքոյ, Մուշում եւս տեղի են ունենում հակաթուրքական զինուած ելոյթներ:

Մինչեւ մեկնելս թարմացրել էի յիշողութիւնս եւ պիտի նշեմ, որ մինչեւ 1915 թ. Մուշն ունէր 12 մեծ ու փոքր թաղեր: Կենտրոնում գտնւում էր շուկան, որտեղ XIX դարի վերջերին գործում էին 800 խանութ եւ արհեստանոց, որոնցից 500-ը պատկանում էր հայերին: 1887 թ. Մուշից արտագաղթել են 600 հայեր, իսկ ողջ գաւառից՝ 15 հազար: 1909 թ. Մուշն ունէր 25,000 բնակիչ, որից հայեր էին 9 հազարը, մնացածը՝ թուրքեր էին եւ քրտեր: Հայերը հողագործ էին, զբաղւում էին նաեւ առեւտրով ու արհեստագործութեամբ: Այժմ Մուշի մարզկեդրոնն է: Ներկայումս ունի շուրջ 100 հազար բնակիչ, մեծ մասը՝ քրդեր: Մեր հանգրուանած Դափ հիւրանոցի հերթապահի ասելով կան նաեւ մի քանի հայ ընտանիքներ: Քաղաքից 10 քիլոմեթր հարաւ-արեւելքում է աւերակ վիճակում գտնուող շատ յայտնի Մշոյ Սուրբ Առաքելոց վանքը:

Մասնագիտութեանս բերումով յիշեցի, որ մինչեւ եղեռնը այստեղ գործում էին Միացեալ ընկերութեան կենտրոնական վարժարանը (Թարգմանչաց դպրոցը), Մուրատ Մխիթարեան վարժարանը, 5 թաղային եւ մէկ օրիորդաց դպրոցները, 2 որբանոցներ: 1899 թ. սովորողների թիւը 750 էր: 1863-1865 թթ. Գարեգին Սրուանձտեանցի խմբագրութեամբ Մուշում լոյս էր տեսնում «Լրատար Արծուիկ Տարոնոյ» լրագիրը: Մշեցի հայերը բնութագրւում էին որպէս «քաջակորով, անձնուրաց եւ ազգային աւանդները պահպանող հայրենասէր, գիտութեան եւ արուեստների մէջ որոշակի ձիրքեր ունեցող մարդիկ»: Դրանցից էին խմբագիր ու մանկավարժ Գալուստ Անդրէասեանը, երգիչ-«Տարօնի սոխակ» Արմենակ Շահմուրադեանը եւ ուրիշներ: Ակամայ յիշեցի եւ այդ մասին մանրամասն գրել եմ վերջերս լոյս տեսած հերթական մենագրութեանս մէջ, թէ ինչ դժուարութիւններով ցուրտ ու ձնառատ օրերին ազգային գործիչ Միհրան Տամատեանը շրջում էր Մշոյ դաշտի գիւղերով եւ յորդորում տեղի հայերին միակամ դիմակայել սպասուող արհաւիրքին:

Նախկին ծուռումուռ, նեղ ու կեղտոտ փողոցներով քաղաքն այժմ ժամանակակից նորմերով կառուցուած եւ զարգացող բնակավայր է: Վաղ առաւօտեան շրջեցինք քաղաքում, եղանք Մուշի հին հայկական թաղում, տեսանք միայնակ եւ որբ Սուրբ Մարիամի կիսաւերակը, նաեւ դեռ պահպանուած մի քանի խարխուլ տուն հայերից, իսկ հայկական գերեզմանոցից՝ այլեւս բան չի մնացել: Ինչպէս Թուրքիայի շատ քաղաքներ, Մուշը եւս ունի իր խորհրդանիշը, դրանք կակաչներն են: Նոյնիսկ փողոցների լուսաւորութեան լապտերները կակաչների տեսք ունեն: Շարժուեցինք, սպասում էր քաղցր դաշտը, ուր մեզ մկրտած Արածանիի սուրբ ջրերն են եւ Սուլուխի կամուրջը. յիշեցինք մեր քաջ հայորդուն, Չաուշին... Վեր դէպի Հաւատամք, Մշոյ Սուլթան Սբ. Կարապետ, մեծ էիր, կիրթ եւ ազդեցիկ, աւերակ ես այսօր, բայց անունդ անմահ է: Մուշից մեկնեցինք Վան: Մուշ - խնուս ճանապարհին, սուլուխ գիւղի մօտ, կանգ առանք հայկական մշակոյթի եւ ճարտարապետութեան գլուխգործոցներից Սուլուխի կամուրջի մօտ:

Այն կառուցուել է Արածանի գետի վրայ 867 թ. Սուլուխ հայ իշխանի կողմից: Կամուրջն ունի 190 մեթր երկարութիւն եւ կառուցուած է 12 կամարների վրայ: 1907թ. մայիսի 27-ին այս կամուրջի մօտ է զոհուել հայ ազգային ազատագրական շարժման հերոս Գեւորգ Չաուշը: Սուլուխի կամուրջը դարձել է մի իւրայատուկ ուխտատեղի հայ ժողովրդի համար, որից էլ դժգոհ 1996թ. թուրքերը պայթեցրին այն: Լիովին վերականգնուել է 2009թ.: Որպէս հայ մարդ, ինքս լաւ գիտեմ ջրի նշանակութիւնը եւ անթաքոյց նախանձով էի նայում ջրառատ գետին: Խունկ ծխեցինք, լուռ աղօթեցինք մեր բոլոր հին ու նոր նահատակների համար եւ փոքր ինչ թեթեւացած շարունակեցինք ճանապարհը: Քանզի մեզ Սասնայ Ծռերի Փոքր Մհերն է սպասում, պիտի բախենք նրա ժայռափոր դուռը: Սարդուրիի, Արգիշտիի Տուշպա-Վան ժայռամրոցն է վեր խոյանում, կը բարձրանանք:

Երկար գնացինք, բայց ճանապարհներն ուղղակի անթերի են եւ գրեթէ չյոգնեցինք: Բերկրանքը պատեց բոլորիս երբ մեքենայի պատուհանից մեր առջեւ փռուեց Վանայ հրաշագեղ լիճը: Մեր սուրբ լեռ Արարատը, որ աննման է բոլոր կողմերից եւ, որ սովոր ենք հիւսիսից տեսնել, եւս բացել էր իր գեղադէմ հարաւը: Ծաղկանց լեռներ, Թոնդրակ հրաբուխ եւ՝ Վասպուրական աշխարհն է սա: Սքանչելի, փիրուզէ ծով Վանայ՝ անհոսք աղի լիճ Հայկական լեռնաշխարհում, մեծ Հայքի տուրուբերան եւ Վասպուրական նահանգներում: Գտնւում է հայկական Տաւրոսի հիւսիս արեւելեան մասի, Կորդուաց լեռների, Կոտուր լեռնաշղթայի եւ ծաղկանց լեռների միջեւ, 1720մ. բարձրութեան վրայ: Լճի հայելին 3760 կը մայ է, առաւելագոյն լայնութիւնը՝ մօտ 51քմ., խորութիւնը՝ մինչեւ 451մ.: Այն գրեթէ 2.5 անգամ մեծ է Սեւանայ լճից: Ունի անկանոն քառանկեան տեսք, յաճախ՝ զառիթափ ափերով: Հիւսիս-արեւելքում Արճէշի խորշն է, ափերին՝ դեւեբոյնի, ծղուկծղուկ, կտուց հրուանդանները: Վաղ շրջանում ունեցել է 7 կղզի, այժմ մնացել են չորս «Բզնունեաց կղզիք»՝ Լիմ, Կտուց, Առտեր եւ Աղթամար:

Վասպուրական աշխարհում գործած Մկրտիչ Փորթուգալեանին, Արմենական կուսակցութեանը, Վանում լոյս տեսած թերթերին եւ այլ հարցերի նուիրուած հաստափոր մենագրութիւնների հեղինակ եմ եւ վստահաբար պիտի ասեմ, որ չնայած երիտթուրքերի ցեղասպան քաղաքականութեանը, ինչպէս 1896թ., այնպէս էլ 1915թ. Վանը հերոսաբար ինքնապաշտպանուեց: Արդիւնքում իրական ոչնչացումից 150 հազար հայեր փրկուեցին: Իսկ այժմ լճի շրջակայքում հիմնականում բնակւում են քրդեր, որոնք զբաղւում են ձրկնորսութեամբ, աղահանութեամբ եւ ձիթենու, խնձորի, դեղձի, նռենու եւ նուշի այգեգործութեամբ: Հնագոյն ժամանակներից լիճը նաւարկելի է: Վանը յայտնի է նաեւ կատուների յատուկ ցեղատեսակով, որը սիրում է լողալ ջրում:

Փիրուզագոյն, կապոյտ, կաթնագոյն Վանայ լիճն ուղեկցում է մեզ զմրուխտ Աղթամար կղզի: Նաւակում մեզ ողջունում, իսկ յետոյ մեզ հետ սրտաբուխ պարում է մեր նաւապետը: Աննման է Սուրբ Խաչը, տեսնես ո՞վ է կերտել այս հրաշքը: Բոլորս հաւաքուեցինք եկեղեցում եւ փորձեցինք Հայր մեր երգել, սակայն մեզ մօտեցան երկու ոստիկան եւ, ասելով, որ սա թանգարան է եւ չի կարելի այն, ինչ փորձում էք անել, արգելեցին: Ցաւոտ էր, շատ ցաւոտ, երբ քո բնօրրանում արգելում են քո սրտի երգը: Վայելք է Վանայ լճի մեղմ ջուրը, նշենիների հանդարտ զովութեան տակ սուրճ կամ թէյ ըմպելը: Ափին փոքրիկ ռեստորանում սեղանները բաց էին, մեր ունեցած «Ախթամար» կոնեակի հետ Վանայ տառեխ վայելեցինք: Այնուհետեւ գնացինք Վանից 90քմ. հեռաւորութեան վրայ գտնուող Բերկրիի ջրվէժը (Մուրադիյէ) տեսնելու: Այն արհեստական է եւ մօտ 15 մեթր բարձրութիւն ունի: Գարնանային ջրառատութիւն էր եւ ջրի ամեհի ուժը շատ ազդեցիկ էր: Այդպիսի զգացողութիւն ունեցել էի Լարսով անցնելիս վարարած Թերէք տեսնելիս: Իսկ ճօճուող կամուրջն ինձ յիշեցրեց 1915-ի Վանի խորհրդաւոր նահանջներն ու հայերի անելանելի վիճակը: Այդ հակասական մտորումներով էլ գնացինք քաղաք՝ գիշերելու: Ի դէպ, այստեղ թէ՛ հիւրանոցը եւ թէ՛ սպասարկումն անհամեմատ լաւն էր:

(Շարունակելի)

ԻՆՉՊԷՍ ԼՈՒՍԱԿԱԹ ԱՐԵԳԱԿԱՆ ՇՈՂ

Քանոնահարուհի, «World Folk Vision 2020» համաշխարհային մրցոյթ փառատօնի գլխաւոր մրցանակակիր, Global Icon Awards 2025 համաշխարհային խորհրդանիշ տիտղոսակիր եւ բազմաթիւ, հեղինակաւոր միջազգային մրցոյթների առաջին կարգի դափնեկիր Մարիաննա Գէորգեանին:

Նա աշխատում է Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տան, «Տաղարան» հնագոյն երաժշտութեան համոյթում մենակատար քանոնահարուհի (գեղ. ղեկ ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ՝ Սեդրակ Երկանեան):

...Հանդիպեցինք պատահաբար: Աշխարհի մեծ բեմերում հրաշալի յաղթանակ էր գրանցել՝ հարիւր տասնհինգ երկրների մօտ չորս հազար մասնակիցներից առաջ անցնելով եւ գլխաւոր մրցանակը Հայաստան բերելով: Հայ ժողովրդական երաժշտութեան իւրօրինակ դեսպանն է տաղանդաւոր ու փխրուն Մարիաննա Գէորգեանը, ով իր քանոն նուագարանով ահա արդէն քանի տարի ամենատարբեր դահլիճներում օտարերկրացիներին է հասցնում հայ երգի ու երաժշտութեան ամենանուրբ ելեւէջները՝ միշտ պահպանելով միայն բացառիկ տաղանդաւոր արուեստագէտներին յատուկ զուսպ կեցուածքը: Արուածի գնահատականը թողնելով տարբեր ազգութիւնների հանդիսատեսին, նա մէկ գլխաւոր խնդիր է միշտ փորձում լաւագոյնս լուծել. քանի որ երաժշտութեան լեզուն հասանելի է բոլորին, իսկ ներկայացրած երաժշտութեան մէջ իր ժողովրդի նուիրական իղձերն են, մարդկանց պիտի փոխանցուեն յատկապէս իր պէս նուրբ ու զգայուն լարերի միջոցով, եւ որոնցից՝ ամէն հպումից լոյս է ճառագում: Եւ դա յատկապէս է կարեւոր՝ մեծ սիրահար Սայեաթ Նովայի բառի ու մեղեդու թարգմանն հանդիսանալու եւ հանդիսատեսին հասցնելու պարագայում: Լաւ երաժշտութիւնը՝ առաւել եւս աւելի քան հրաշալի ներկայացմամբ, հէնց այն կախարդական ու անտեսանելի բանալին է, որ բացում է հոգու եւ սրտի դռները, ուղեկցում յատկապէս լուսաւոր ու բարի այն մոլորակը, ուր մերժուելով մերժուած են տգիտութիւնն ու ընչաքաղցութիւնը, որտեղից մեզ այցի են գալիս թւում է՝ վաղուց մոռացուած ազդակները գեղեցիկի մասին, որ չհասկանալով, թէ այլեւս չընկալելով՝ թողել ենք մի տեղ՝ կէս ճանապարհին: Իսկ քանոնի նուրբ լարերի խորքում սիրտն ու հոգին ալեկոծող ինչ գանձեր կան, որ մատների տակ արթնանում, ինչ-որ պահից քեզ առնում են իրենց քաղցր օղակի մէջ ու պարուրում ողջ էութիւնդ: Մտքում ծնուած մեղեդին անցել սրտով ու փոխանցուել է նուրբ լարերին: Եւ արդէն երեք հարիւր տարի ու մի բան էլ աւելի, մեծ սիրահար “Սայաթ Նովայի” բառն ու մեղեդին նոյն ապրումի ու աստուածապարգեւ զգացմունքի թարգմանն է: Եւ ամէն անգամ, երբ մատների հպումից լարը շիկնում ու թրթռում է, յանկարծ պարզւում է, որ նա պարզապէս խօսում է կարկամած սրտի փոխարէն՝ փոխանցելով նուիրական այն բառը, որ այնպէս դժուար է արտաբերել, իսկ թէ բարձրաձայնեցիր՝ այլեւս ապրելու է ու ապրեցնի:

Լարերը շիկնեցին մատների համբոյրից, եւ բառը մէկէն դարձաւ երգ,
Ծաղկեց մոռացուած մի հին մեղեդի, եւ կարօտը պատէպատ զարկուեց:
Ամէն հպումից լոյս է ճառագում, երգի մէջ հառաչում է սօսին,
Մի աղջիկ՝ դալար ու կանաչ եղէգ, բախտի պէս կանգնել է քո ճամբին:
Բախտի պէս յայտնուել, կանչում ու ժպտում է, արթնացրել է երազ ու մորմոք,
Սիրտդ ի՞նչ է յուշում, դու գտե՞լ ես արդեօք, թէ գտածդ նորից ես կորցնում:
Երազ ու ցնորք խառնուել են իրար, անցեալ ու ներկայ էլ չկայ,
Բառերը լռել են, լարերը դողում են, եւ սէրն է ծնւում՝ լոյսը վկայ:

...Հայ պանդուխտի ու գեղջուկի խոհ ու ճգնումների թարգման երգերի խոնարհ նուիրեալ Կոմիտասը կը մտածէ՞ր արդեօք, որ հայոց ոստան Երեւանում տարիներ անց կը յառնի իր անուամբ մշակութային առինքնող մի կեդրոն, որտեղ զուլալ ու մաքրամաքուր կը հնչեն աստուածային մեղեդիներ: Եւ ունկնդրին դրանց փոխանցողը կը լինի երիտասարդ մի արուեստագէտ, ում նուրբ մատների տակ քանոն նուագարանի լարերն ուղղակի հրաշքներ են գործում:

...Դահլիճը քար լռութեան մէջ դեռ մեղեդու վերջին հնչիւնների հետ էր, դեռ սիրոյ անաւարտ մի պատմութիւն մեղեդուց պոկուել եւ հանդիսատեսի գլխավերեւում պտտւում ու տեղը դեռ չէր գտնում: Լարերի միջոցով փոխանցուած այրող կարօտը ծաղկել եւ հեռու մի տեղ էր ասես շտապում: Ո՞ւր: “Կախարդուած ծաղիկների” կանչով հասնելու կապոյտ տերեփուկին իջած ու ամուր փարուած զատիկի՞ն, դաշտերում սփռուած Մարիամածաղկի բոյլերի՞ն, որ իրենց սրտում քնքշօրէն կրում են այն միակ ու ամենակարեւոր տողը: Իսկ լեռներում ծնուած քամիներից ու ծաղիկների իրիկնային սօսափից պիտի ծնուէր յատուկ Մարիաննա Գէորգեանի համար գրուած “Տաղ Աստուածածնան” ու քանոնահարուհու մատների քնքուշ հպումի ներքոյ աղօթքի պէս բարձրանար դարերի պատմութիւնն ուսած եկեղեցու դեղին քարաքոսով պատուած պատերն ի վեր.

Ինչպէս լուսակաթ, արեգական շող, կաթում է քո մէջ խնկաբոյր զմուռս,

Մեզ համար շինուած չքնաղ քաւարան, գեղեցկապաճոյճ եթերանման զարդակամարով,

Ուր քառանկիւնի սեղանն է կանգնած, պսակազարդուած չորս հիւսակներով:

Եւ հրաշքներով զարմանասքանչ:

...Յետոյ մէկէն պոռթկացին ծափերն ու բեմի առաջամասը մի քանի րոպէում ամբողջովին պատուեց ճերմակ ու կարմիր վարդերով: Հանդիսատեսի երախտագիտութեան ու խոնարհումի անափ գնահատանքի մէջ կախուել ու արթնացել էր անդարձ անցած օրերից մի պատառիկ: Իսկ մեղեդուց պոկուած եւ կապոյտ տերեփուկի թերթիկին զգուշօրէն հպուած զատիկը հեռուից եկած նամակաբեր էր ու կարեւոր ինչ-որ բան էր ասես պատմում: Հաւանաբար այն աղջկայ մասին, որ յայտնուեց, ցոլաց ու թէկուզ անցաւ, բայց ապրում է երբեք չմոռացուող ամենակարեւոր երգում:

ՆՇԵՆՈՒ ԲՈՅՐՈՎ ԼՈՅՍ ԱՂՋԻԿ
Արցունքներդ մաքրիր, աղջիկ, նշենին արթնացել է, տե՜ս,
Աչքերդ փոխ է առել ու ծաղկել՝ նայելով քեզ:
Ճերմակ ու վարդագոյն հագել, նարօտ է կապել դաշտերին,
Նեկտարը մեղուին է տուել, թերթիկները՝ քամու թեւերին:
Մեղուն նեկտարը կը տանի, թերթիկները կ՚ապրեն գրքերում,
Մի տեղ կարօտներ կ՚այրուեն, յուշերը կ՚ապրեն մի սրտում:
Ջուր ես դու այդպէս մորմոքում, նշենու բոյրով լոյս աղջիկ,
Գարուն է, սէրն է ծաղկում, արցունքներդ մաքրիր, նուշ աղջիկ:

ՀՀ վաստակաւոր ժուռնալիստ, գրող հրապարակախօս
ՏԻԳՐԱՆ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Լուսանկարը Լա Սկալայի, Հոնկոնգի վաստակաւոր լուսանկարիչ Թոնի Լուկի:

ԴԱՐԻ ՊՈԷՏԻ ԱՆՄԱՀԱԿԱՆԸ

(Շարունակուած 7-րդ էջէն)

«Ներիր ինձ, Հայրենի՜ք, նուաստիս՝անփառունակ ընթացքի համար: Ներիր, որ չկարողացայ կերտել յաղթական երթդ, ու ներիր, որ բոլոր վէրքերդ չկարողացայ առնել մարմնիս վրայ՝ որպէս բազմաչարչար օրերիդ մխիթարանք...

Ներէք ինձ, այսօրուայ հրաշք մանուկներ, ներէք, որ արիւնս բաւարար չեղաւ փրկել ձեր կեանքերն ու վաղուայ սերունդներին: Եւ ներիր ինձ, իմ ԱԶԳ, անվնաս երկիր քեզ չնուիրելու համար... »

Աննահանջ հերոսը մագիստրոսական թեզը անաւարտ թողնելով, կամաւոր, շտապել է հայրենիքը փրկելու: Նա անգամ պատերազմի դաշտում իր շուրջն է հաւաքել բոլորին ու մեր հայրենիքի, մեր արքաների մասին պատմութիւններով ոգեշնչել, բարձր է պահել մարտական ոգին: Մարտական ընկերներից մէկի յուշերում է, թէ ինչպէս Շուշիի մարտերից առաջ իր կապոցը տուել է իրեն ասելով. «Ես մինչեւ վերջ եմ կռուելու, չեմ նահանջելու, լաւ մնացէք»:

Վստահ էր ինքը անմահ է...

Ոսոխի յանկարծակի գրոհից անգամ չի տագնապել, խիզախօրէն մխրճուել է ամենաթէժ մարտերի մէջ ու հմտօրէն տիրապետելով ռազմական արուեստին, անձնուրացաբար կռիւ տուել, պայքարել՝ չմիանալով նահանջող գումարտակին՝ յաղթելու ցասումը սրտում:

Այս տարի ԱՆՄԱՀԱԿԱՆԻ 35-ամեայ յոբելեանն է...

Մարտական բոլոր ընկերները փաստում են, որ Վաչագան Մանուկեանի գոյամարտում ինքնավստահութիւնը, հաւատը, քաջասրտութիւնը վարակիչ էր: Յաղթական ոգով անկոտրում առաջամարտիկի, սխրանքները ի փառս հայրենիքի՝ ոսկէ տառերով պէտք է գրուեն: Իւրաքանչիւր հայ հպարտ է ու պէտք գիտակցի, որ Վաչագանը 44-օրեայ պատերազմի հաւաքական կերպարն է: Հերոս Վաչագան Մանուկեանի պայծառ ու յաղթական ժպիտը երբեք չի մարի...

Նա այդ ժպիտով է նայել վերջին մարտից առաջ, իսկ այդ մարտը թուրք դիպուկահարների հետ էր ...

Հայ ազգի վեհանձն մարտիկի գործողութիւնները այլեւս պատմութիւն է:

Հերոսներով է հայրենիքը կերտւում, պէտք է ճանաչել նրանց: Սերունդներին կրթել ու դաստիարակել՝ նրանց սխրանքներով, հերոսական պատումներով, հայի խիզախ ու արիասիրտ ոգով: Նրա հոգու արեգակնային լոյսը փարոս է, ոգու ճախրանքը՝ յորդոր, լեգենդը ուղենիշ՝ հային մղելու ապրելու արարելու, յաղթելու:

«Յիշէք՝ յաղթողներին պաշտում են անգամ իրենց երբեմնի թշնամիները»:

Վաչագանի գիրը, միտքը, գաղափարը ընթերցելով, վերընթերցելով ակամայից հզօրանում, ոգեշնչւում, լոյսով ես լցւում: Սահմանագիծը հատելով՝ վերերկրային պատրանքներ ապրում: Աստուածայինի ու տիեզերականի անբացատրելի մի աշխարհ է, որտեղ էլ նա, իրեն յատուկ բարի ժպիտով, լուսապսակը գլխին, հզօրութեամբ բազմած՝ թեւադրում, ուղղորդում, յիշեցնում է հայրենիքի ուժը, որում սրբազան արիւնն է շրջանառւում՝ իր ու հայրենի հողի համար սրբազան պայքարի ելած քաջ տղաների հաւաքական ուժի կերպարը:

«Ուզում եմ բոլորդ էս կեանքում յաղթողներ լինէք...» ԱՆՄԱՀԱԿԱՆ-ից:

Երեւան

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ավստրալիայէն

ՇԱԲԱԹ, 2 ՄԱՅԻՍի կէսօրէ ետք, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ. Տ. Աւետիս Քհնյ. Համբարձումեանի, Բրշ. Պօղոս Սրկ. Քէլէշեանի եւ Թեմական Խորհուրդի Փոխատենապետ Տիար Ստեփան Գրգեաշարեանի, մասնակցեցաւ

Հայոց Ցեղասպանութեան 111-րդ տարելիցի առիթով անմեղ զոհերու յիշատակին նուիրուած արարողութեան՝ Ռայտի շրջանի Մետոպանքի զբօսայգիին մէջ գտնուող հայկական Խաչքարին առջեւ: Աւանդական դարձած այս ձեռնարկը կազմակերպուած էր Ռայտի քաղաքապետարանին կողմէ, որ 2005-ին պաշտօնապէս ճանչցած էր Հայոց Ցեղասպանութիւնը եւ հրապարակաւ դատապարտած ցեղասպան պետութիւնը:

Արարողութեան մասնակցեցան Սիտնիի հայկական գրեթէ բոլոր կազմակերպութեանց ներկայացուցիչները: Տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում եւ օրհնութիւն:

Սրբազան հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց քաղաքապետ Թրէնթըն Պրաունին եւ Սարգիս Ետէլեանին, որ օրուան հանդիսավարն էր:

Ձեռնարկի աւարտէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Ryde Multicultural Center-ի մէջ, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 13 ՄԱՅԻՍի կէսօրէ առաջ, ընկերակցութեամբ Արժ. Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդարանին մէջ ընդունեց Վերապատուելի Փօլ Հայտոսքեանը, նախագահ Պէյրութի Հայկազեան Համալսարանին, Մերձաւոր Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին նաեւ նախագահ՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու: Վերապատուելի Հայտոսքեանին կ'ընկերակցէին Վերապատուելի Յակոբ Սարգիսեան, Հոգեւոր հովիւ Սիտնիի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ եւ Վերապատուելի Գրիգոր Եումուշաճըքեան, նախագահ Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան եւ գործադիր տնօրէն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին: Վերապատուելի Հայտոսքեան Սիտնի կը գտնուի համաշխարհային Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրման 180-րդ, Սիտնիի Եկեղեցւոյ հիմնադրման 60-րդ, Սիտնիի Եկեղեցւոյ Կառուցման 30-րդ եւ Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան հիմնադրման 25-րդ տարեդարձներու տօնակատարութեան առիթով:

Հոգեւոր հայրերը մտերմիկ խօսակցութիւն ունեցան եկեղեցին եւ ազգն ու հայրենիքը յուզող զանազան հարցերու մասին, ամրապնդելով փոխադարձ յարգանքն ու քրիստոնէական եղբայրական սէրը:

ՇԱԲԱԹ, 30 ՄԱՅԻՍ – Մաքարթըր գերեզմանատունը կը գտնուի Վարովիլի մէջ, որու Հայկական բաժինին մէջ տրամադրելի են 1200 գերեզմանամասեր: Կէսօրէ առաջ ժամը 11-ին, ձեռամբ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան Առաջնորդ հօր տեղի ունեցաւ պաշտօնական բացումը եւ յատուկ արարողակարգով օրհնութիւնը հայկական բաժինին: Սրբազանին կ'ընկերակցէին Գերյարգելի Հայր Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Սուսանեան, հոգեւոր առաջնորդ Աւստրալահայ Կաթողիկէ համայնքին, Վերապատուելի Գրիգոր Եումուշաճըքեան, Արժանապատիւ քահանայ հայրեր յանձինս Տէր Պարթեւ Գարագաշեանի, Տէր Աւետիս Համբարձումեանի, Տէր Աշոտ Աբրահամեանի, նաեւ՝ Աւագ Սարկաւագ Վարդան Էլմասեանի, Թեմական Խորհուրդի Ատենապետ Տիար Սարգիս Տէր Պետրոսեանի, Փոխատենապետ՝ Տիար Ստեփան Գրգեաշարեանի, Գանձապահ՝ Տիար Զաւէն Եաղլճեանի եւ Տիար Գէորգ Չափրազեանի: Ներկայ էին նաեւ հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ Սիտնիի Հայ համայնքի անդամներ: Ներկայ էր նաեւ Տիկին Էլօ Մկրտիչեան, որուն ջանքերուն շնորհիւ կարելի եղած էր ապահովել բաւական մեծ տարածք որպէս հայկական հողամաս:

Սրբազան հայրը տուաւ իր պատգամը եւ յանուն Հայ համայնքին, իր շնորհակալական եւ երախտագիտական զգացումները փոխանցեց Մաքարթըր գերեզմանատան տնօրինութեան եւ բոլոր անոնց, որոնք օգտակար հանդիսացան հայկական բաժինին ձեռքբերման աշխատանքին:

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԵԼ Է ԱՐՄԷՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ «ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ» ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

ԼԻԼԻԹ ԼԱԼԱՅԵԱՆ

Հայ բարբառագիտութեան եւ արցախագիտական ուսումնասիրութիւնների համար նշանակալի իրադարձութիւն է Արմէն Սարգսեանի «Ղարաբաղի բարբառի բառարան» աշխատութեան երրորդ հրատարակութիւնը: Տասնեակ տարիների ընթացքում գրուած այս աշխատութիւնը ոչ միայն եզակի լեզուաբանական արժէք ունի, այլեւ ներկայանում է որպէս Արցախի մշակութային յիշողութեան պահպանման կարեւոր միջոցներից մէկը: Բառարանը պարունակում է Արցախի բարբառի քառասուն հազարից աւելի բառ եւ հառայօդուած, արտայայտութիւններ ու դարձուածքներ, որոնք արտացոլում են արցախահայութեան լեզուամտածողութիւնը, կենցաղը, հաւատալիքները եւ բազմադարեայ մշակութային փորձը:



Այս հրատարակութեան կարեւորութիւնը յատկապէս մեծ է մեր օրերում, երբ Արցախից բռնի տեղահանութիւնից յետոյ վտանգուած են ոչ միայն պատմամշակութային յուշարձանները, այլեւ ոչ նիւթական մշակութային ժառանգութեան բազմաթիւ դրսեւորումներ, այդ թւում՝ բարբառը: Այդ պայմաններում բառարանը վերածւում է ոչ միայն գիտական աշխատութեան, այլեւ ազգային յիշողութեան պահպանման փաստաթղթի:

2013 թուականի առաջին հրատարակութեան ամբողջ տպաքանակը սպառուելուց յետոյ՝ 2019 թուականին բառարանը վերահրատարակուեց: Թւում էր՝ Արցախի բարբառի հարուստ գանձարանը նորից իր ճանապարհը պիտի գտնէր դէպի ընթերցողը: Սակայն հետագայ իրադարձութիւնները այլ ընթացք ստացան. վերահրատարակուած ամբողջ տպաքանակը 2023 թ. Ատրպէյճանի կողմից իրականացուած էթնիկ զտումների ժամանակ մնաց Ստեփանակերտում...: Այդպէս գիրքը, որը կոչուած էր պահպանելու Արցախի կենդանի խօսքը, ինքն էլ դարձաւ հայրենազրկուած մշակութային յիշողութեան մի մաս՝ սպասելով իր վերադարձին ու նոր ընթերցողներին: Եւ այդ առումով այս նախաձեռնութիւնը շատ աւելին է, քան զուտ բառարանի վերահրատարկութիւնը:

Հեղինակը՝ բանասիրական գիտութիւնների թեկնածու Արմէն Եուրիկի Սարգսեանը, երկար տարիներ զբաղուել է Արցախի բարբառով, բանահիւսութեամբ, ազգագրութեամբ եւ ընդհանուր ժողովրդագիտութեամբ՝ իրականացնելով դաշտային գրառումներ, հաւաքելով բանաւոր նիւթեր, ուսումնասիրելով ձեռագիր եւ տպագիր աղբիւրներ: Բառարանի նախորդ հրատարակութիւններն արժանացել են մասնագիտական բարձր գնահատանքի՝ ընդունուելով որպէս հայերէնի առաւել կենսունակ եւ ինքնատիպ բարբառներից մէկի ամբողջական շտեմարան:

«Ղարաբաղի բարբառի բառարան»-ը կարեւոր նշանակութիւն ունի լեզուաբանների, բանագէտների, ազգագրագէտների, պատմաբանների, ուսանողների եւ ընդհանրապէս բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրուած են Արցախի մշակութային ժառանգութեամբ: Այն նպաստում է ոչ միայն բարբառային նիւթի պահպանմանը, այլեւ հայերէնի բարբառային մի կարեւոր շերտի հետագայ ուսումնասիրութեանը:

Նոր հրատարակութիւնը եւս մէկ անգամ վկայում է, որ լեզուն մշակութային ինքնութեան կարեւորագոյն յենասիւներից է, իսկ բարբառները՝ ժողովրդի պատմական յիշողութեան կենդանի կրողներ: Արմէն Սարգսեանի բազմամեայ աշխատանքի շնորհիւ Արցախի բարբառի այդ հարուստ շերտը շարունակում է պահպանուել եւ հասանելի դառնալ ինչպէս գիտական հանրութեանը, այնպէս էլ ընթերցող լայն շրջանակներին:

Երեւան

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ
ՊԱՅՔԱՐ Շաբաթաթերթը
կարելի է կարդալ
www.baikarweekly.com
կայքէջով